

Manr  
Hetazotowtyownner :  
Hariza. Arabakan  
arsavanknerë

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Manandyan, Hakob H. (1873-19..). Manr Hetazotowtyownner : Hariza. Arabakan arsavanknerë. 1932.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

\*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

\*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici pour accéder aux tarifs et à la licence](#)

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

\*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

\*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment possible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter [reutilisation@bnf.fr](mailto:reutilisation@bnf.fr).

Հ. Ա. Խ. Հ. ԼՈՒԺ ԺՈՂԿՈՄԱՅ  
ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱԸ ՊԵՏՄԱՆԻԹՅՈՆ ԻՆՍՑԻՑՈՒՑ  
№ 1 ՄԵԽԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱՅՐ № 1

---

## ՀԱԿՈԲ ՄԱՆՈՆԴՅԱՆ

# ՄԱՆՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պելտինգերյան ժարտեղի Hariza կայարանը:
  2. Նույնը գերմաներեն համառոտ՝ Die Station Hariza der Peutingerschen Tafel:
  3. Արարական արշավանիները Հայաստանում (Ժամանակագրական դիտողություններ):
- 

ՀՐԱՄԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՖՈՆԴԻ

---

ՏԵՐԵՎԱՆ

1952



41463810

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒԺՈՂԿՈՄԱՏ  
ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՒԼՑՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԻՆՍԻՏՈՒՏ  
№ 1 ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱՇԱՐ № 1

ՀԱԿՈԲ ՄԱՆՈՒՉՅԱՆ

**ՄԱՆԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- Պելտինգերյան քարտեզի Hariza կայարանը:
- Նույնը գերմանիերեն համառոտ՝ Die Station Hariza der. Peutingerschen Tafel:
- Արաբական արշավանդները Հայաստանում (ժամանակագրական դիտողություններ):



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՁՈՒԴԻ

Յ Ե Բ Ե Վ Ա Ն

1932



ԴԿ 7-9

2008 - 259990



## ԹԵՎՏԻՆԳԵՐՅԱՆ ՔԱՐՏԵԶԻ HARIZA ԿԱՅԱՐԱՆԸ

Գիտության և Արվեստի Ինստիտուտի Տեղեկագրում (№ 5, Յերեվան 1931, եջ 65-87) լույս եր տեսել իմ աշխատությունը «Հայաստանի հին ճանապարհները Artaxata-Satala և Artaxata-Tigranocerta ըստ Պելտինգերյան քարտեզի», վորի մեջ փորձ եր արված լուսաբանելու այդ քարտեզում նշանակված կայարանների անուններն ու տեղերը և վորոշելու վերոհիշյալ ճանապարհների ուղղությունը:

Այդ ուսումնասիրության մեջ Արտաշատից Բագավան տանող գիծը մենք յենթագրել եյինք վհչ թե Զինգիլի լեռնանցքով կամ կողքի վրայով դեպի Պարնասուտ. ինչպես կարծել են Վ. Բելքը\*, Կ. Միլիբը\*\* և Ռ. Կիպերտը\*\*\*, այլ Բուլագ-Բաշից կարակալե և ալստեղից Գայլատու ծովակի մոտ գտնվող լեռնանցքով դեպի Ուչքիլիսե-Բագավան:

Ինստիտուտի № 5 Տեղեկագիրը լույս տեսնելուց հետո՝ մեր հայտնի գյուղատնտես Ստեփան Կամսարարականը, վորը մոտ ծանոթ ե ճանապարհների տեղադրությանը Գայլատու ծովակի արևելյան կողմում, մատնացուց արեց ինձ, վոր Paracata-Zolocerta-Bagauna գծի ուղղությունը կարակալեի վրայով ու Գայլատու ծովակի մոտ գտնվող լեռնանցքով վիճելի լի ու անհավանական:

\*) See W. Beleke, Beiträge zur alten Geographie und Geschichte Vorderasiens, II, Leipzig 1901, եջ 83-92:

\*\*) K. Müller, Itineraria Romana, Römische Reisewege an der Hand der tabula Peutingeriana, Stuttgart 1916, եջ 676-677:

\*\*\*) Kiepert Richard, Atlas von Kleinasiien in 24 Blättern, 1902-1906.

Ստեփան Կամսարականի առարկություններն ու նոր դիտողությունները հիշալ գծի ուղղության մասին թվում են ինձ հիմնավոր:

Նրա կարծիքով՝ դժվար ե այս գծի ուղղությունը չենթադրել Կարակալեյի վրայով, վորովհետև ճանապարհը Բուլագ-Բաշից Կարակալե անհարմար ե ու ճահճային և, բացի այդ, ճանապարհն այս ուղղությամբ շեղվում ե չափազանց դեպի հյուսիս-արևմուտք, ուստի և անհավանական ե իր այդ վոլորապտույտ հեռավորության պատճառով:

Հիմք ընդունելով իր այս դիտողությունները, ինչպես և այժմյան մյուս ճանապարհների տեղադրությունը, Կամսարականը տրամադիր ե կարծելու, վոր Պելտինգերյան քարտեզի հին ճանապարհի ուղղությունը կարելի յե յենթադրել այժմյան Կարվանսարայի վրայով և Կարվանսարայի և կուջաղի լեռնանցքով (= 7245 վոտնաչափ, տես Ռուսական հին շտաբի տասը վերստանոց քարտեզը, թերթ 99), վորն ամենահարմար և դյուրամատչելի լեռնանցքն ե Գայլատուծովակի արևելյան կողմերում և անցանելի յե նաև ձմեռվաամիսների ընթացքում: Մյուս յերկու լեռնանցքները, վորոնցից մեկը (Արասգյոլի լեռնանցքը) գտնվում ե Գայլատուծովակի արևելյան ափերի մոտ, իսկ մյուսը (Ասլանլուի լեռնանցքը) սրանից մի փոքր դեպի արևելք՝ անհամեմատավելի բարձր են ու անհարմար, և անանցանելի յեն ձմեռվա ամիսների ընթացքում: Ուշագրավ ե նաև այն, վոր այժմյան Կարվանսարայի մոտ կան այժմ յերկու հին ավերակներ, վորոնցից մեկը Կամսարականը համարում ե յերթեկող կարավանների հին իջևան\*: Կուջաղի լեռնանցքի մոտ ևս պահպանվել են մեծ ըերդերի ավերակներ:

\* ) Այդ բարվանաբայի ավերակները լուսանկարել ու հրատարակել ե «Христианский Восток»-ի յերրորդ հատորում Ազխարհեկ Քալանթարը (т. III, նու. I, Պետրոգրադ 1914 թ.): Միջնադարյան այդ քարվանսարայը, վոր դանվում ե բաց և լայն գոշտում՝ Զորից 15-20 վերստ դեպի հյուսիս-արևմուտք, Ազիս Քալանթարի կարծիքով, կառուցված պիտի լինի XIII-րդ դարից վեց ուշ Ազխարհեկի դաշտ միակ արձանադրության մեջ հիշատակված ե, վոր բարվանաբայը կառուցել ե Ազոտը:

Կամսարականի տեղագրական այս նոր ցուցումները, ինչպես տեսնում ենք, կարեոր են ու հիմնավորված: Ուստի անհրաժեշտ եր վերանայել իմ նախկին լենթաղրությունը Զոդկերտ-Ցոլակերտի տեղադրության մասին, նաև վերաքրննել ու ճշտել **Փառախոտից Բագավան** տանդղ գիծը վերոհիշյալ կովանների ոգնությամբ:

Նախորդ իմ աշխատության մեջ մատնացույց եր արված, վոր **Փառախոտից մինչև Բագավան Պելտինզերյան** քարտեզում նշանակված են հետևյալ կայարանները<sup>1)</sup>

Paracata XXIII (=**Փառախոտ**, տես W. Beleki, Beiträge zur alten Geographie und Geschichte Vorderasiens II, Leipzig 1901, էջ 83-92).

Coloceia XXIV (**Անանուն Ռավեննացու աշխարհագրության մեջ** Zotozeta, տես Ravennatis Anonymi cosmographia, ed. Pinder et Parthey).

Hariza XXIV.

Raugonia (**Ռավեննացու մոտ** Ragauna, ովեաք և լինի 'Bagauna, տես J. Marquart, Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Berlin 1919, էջ 23 և 69):

Կայարանների անունների մոտ զրված թվերը ցույց են տալիս տարածությունները մի կայարանից մյուս կայարան հսկմական մղոններով (milia passus = 1,4815 կիլոմետր): Հանգուցային Raugonia կայարանի մոտ Պելտինզերյան քարտեզն ունի նշած յերկու աշտարակ<sup>2)</sup>: Տարածությունը Paracata-Փառախոտից մինչև Raugonia-Բագավան կազմում է 81 հոն. մղոն կամ  $1,4815 \times 81 =$ մոտ 120 կիլոմետր:

Վորոհիշյալ իմ աշխատության մեջ Coloceta կամ Zotozeta կայարանի անունը յես առաջարկել եմ ուղղել \*Zoloceta (Colo- կամ Zoto- = \*Zolo- և -ceia կամ -zeta = -certa) և

<sup>1)</sup> Կ. Միլերի և Յ. Մարկովտի կարծիքով՝ այդ աշտարակները ցույց են տալիս, մոր կայարանները յեղել են քաղաքներ կամ պինդորական սպահակառեցիներ:

յենթադրել եմ, վոր \*Zolocerta կայարանը համապատասխանում ե Յեղիշելի Զողկերտին և Մովսես Խորենացու Ցողկերտին։ Հիմնվելով Ալիշանի ցուցմունքների վրա («Այրարատ», Վենետիկ 1890, եջ 123-124)՝ Զողկերտ-Ցողկերտի տեղը յես ևս վորոշել եմ Սուրմալի գյուղից դեպի հարավ-արևելք՝ այժմ յան կարակալեյի ավերակների վայրում։

Կամսարականի վերոհիշյալ ցուցումներին ծանոթանալուց հետո՝ ինձ թվում ե այժմ, վոր Ալիշանի յենթադրությունը Զողկերտ-Ցողկերտի տեղադրության մասին պետք ե համարել անհավանական։ Յեթե ընդունելու լինենք Պագառա- \*Zolocerta-Hariza-Bagauna գծի ուղղությունը կարվանսարայի և Կուջաղի լեռնանցքի վրայով՝ այդ դեպքում, ընականաբար, կասկածելի կլինի այդ գծի շեղումը դեպի կարակալե։ Իսկ վոր հոռմեական շրջանի հին այս ճանապարհնանցել ե, իրոք, հենց այս հարմար լեռնանցքով՝ այդ հաստատվում ե ըստ իս Hariza կայարանի տեղադրությամբ, վոր հաջողվեց ինձ գտնել ոռւսական հին շտաբի տասը վերստանոց քարտեղի վրա։

Ընդարձակ այս քարտեղի վրա կարվանսարայի կամ կուջաղի լեռնանցքի հարավում (տասը վերստանոց քարտեղի վրա լեռնանցքն անվանված է՝ Կարանսարայսկի ներքանք, իսկ լինչի քարտեղում՝ Կուջահամայական կամ կուջաղի լեռնանցքն անվանված է՝ Կարանսարայսկի արևմուտք՝ նշանակված ե Բալըխ-Չայ գետի ափին Արուճ գյուղը։ Այս գյուղի հին անունը յեղել ե, հավանորեն, \*Հառիճ, վոր հետազում կարող եր թուրքերեն կամ քուրակերեն արտասանվել նաև \*Հառըճ և ոռւսերեն տառագարձությամբ զրվելու յեր, ընականաբար, (h)Արուճ։ Իսկ այս \*Հառիճ-Արուճ-ը, ինչպես տեսնում ենք, կատարելապես համապատասխանում ե Պելտինգերյան քարտեղի Hariza-ին։

Hariza կայարանի հեռավորությունը Bagauna հանգուցալին կայարանից ցույց ե տրված Պելտինգերյան քարտեղում 24 հոռմեական մղոն կամ  $1,4815 \times 24 =$ մոտ 36 կիլոմետր, և ուշադրավ ե, վոր հենց այս տարածության վրա-

յե գտնվում այժմյան Ուչքիլիսե-Բագավանից վերոհիշյալ Արյաջ-ը՝ Ուրեմն՝ Hariza կայարանը վհչ միայն ըստ իր անվան, այլ նաև ըստ այդ տարածության՝ ճշտիվ համապատասխանում ե՝ \*Հառիճ-Արյաջ-ին:

Hariza-ի անվան և տեղի այս լուսաբանությունը կարեւվոր մի կովան և նաև Coloceia (=\*Zolocerta) կայարանի տեղադրության վորոշման համար: Պեվտինգերյան քարտեզից հայտնի յե, վոր Բագավանից Արտաշատ տանող ճանապարհի վրա Coloceia կայարանը գտնվել է Hariza-ից 24 հռոմեական մղոն կամ մոտ 36 կիլոմետր հեռավորության վրա: Արդ՝ ոռոսական հին շտարի տասը վերստանոց քարտեզի վրա Արյաջ-ը գտնվում է Կարվանսարայի կամ Կուջաղի լեռնանցքից մոտ 10 կիլոմետր դեպի հարավ: Պարզ ե, ուրեմն, վոր Պեվտինգերյան քարտեզում մատնանշված տարածության համաձայն Coloceia կայարանի կամ հին Զոլկերտ-Ցոլակերտի տեղը յենթադրվելու յե Կարվանսարայի կամ Կուջաղի լեռնանցքից մոտ 26 կիլոմետր դեպի հյուսիս: Դժվար չե նաև յեզրակացնել, վոր ըստ այդ հեռավորության Coloceia-<sup>\*Zolocerta</sup>-ի տեղը պետք ե յենթադրել վհչ թե այժմյան Կարակալեյի ավերակների վայրում, այլ Կարվանսարայի կամ Կուջաղի լեռնանցքից Ն. Զարուխչի կամ Խոշ-Խաբար իջնող ճանապարհների վրա (տես Ռուսական հին շտարի տասը վերստանոց քարտեզի վրա՝ H. Կարսչի և Խօն-Խաբար): Ուշագրավ ե առանձնապես, վոր Մովսես Խորենացու պատմության մեջ ևս Ցոլակերտի տեղը մատնանշված ե «մերձ ի լեառնն հարաւոյ... առ խորշիւք լեռնոտինն»: Խորենացին, խոսելով Ամասիայի և նրա վորդիների մասին, մեջ ե բերում Փառախոտի ու Ցոլակերտի վերաբերյալ հետեւյալ ավանդությունը՝

«Ամասիա ընակեալ յԱրմաւիր՝ յետ ամաց ծնանի զԳեղամ, և յետ Գեղամայ զՓառոխ արի և զՑոլակ: Եւ յետ ծնանելոյ զնոսա՝ անցանէ զգետովն մերձ ի լեառնն հարաւոյ. և շինէ անդ առ խորշիւք լեռնոտինն մեծապէս ծախիւք երկուս տունս, զմին յարեւլս

կոյս, մօտ յակունս աղբերցն, որ առ ստորոտով լերինն ելանեն. իսկ զմիւսն լարևամուտու կոյս նորին տանն բացագոյն իրր մեծօր հասարակ աւուր միոյ հետեակագնացի առն ճանապարհի: Եւ ետ զնոսա ի ժառանգութիւն երկուց որդւոց իւրոց, արւոյն Փառոխի և կայտառին Ցոլակաչ. յորս ընակեալ յիւրեանց անուն զտեղիսն կոչեցին, ի Փառոխայ՝ Փառախոտ, և ի Ցոլակ՝ Ցոլակերտ» (տես «Մովսիսի Խորենացւոյ, Պատմութիւն Հայոց», Տփղիս 1913, 1, ԺԲ, էջ 40):

Խորենացու այս վկայությունը Ցոլակերտի տեղադրության մասին, ինչպես և Հարիզա կայարանի նույնացումն այժմյան Արյաճ-ի հետ, պարզ ու հաստատուն ցուցումներ են, վոր հնարավորություն են ընձեռում գիտական արշավախմբերին հետախուզումներ կատարելու վերև մատնանըշված շրջանում և վերջնականապես ճշտելու Coloceia կայարանի՝ հին Զողկերտ-Ցոլակերտի տեղը:

Մեր նախորդ աշխատության մեջ մատնացուց եր արքած, վոր Վ. Բելքը Paracata-Փառախոտի տեղը յենթադրում ե այն ավերակների վայրում, վորոնք անվանվում են Բուլագ-Բաշ՝ և գտնվում են Դաշբուռուն գյուղից 5 կիլոմետր հեռավորության վրա՝ զեպի հարավ-արևելք (տես Dr. W. Belek, Beiträge zur alten Geographie und Geschichte des Vorderasiens, Leipzig 1901, էջ 83-92). Ինձ թվում ե, վոր Հարիզայի տեղադրության ճշտումը կարող ե նեցուկ ծառայել ապագա եքսպեդիցիային վերաստուզելու տեղում նաև այս յենթադրությունը: Պեվտինզերյան քարտեզում Paracata-Փառախոտի հեռավորությունը Coloceia կայարանից ցույց ե տրված 33 հոռմեական մղոն կամ մոտ 49 կիլոմետր, իսկ Հարիզայից՝  $33+24=57$  հոռմեական մղոն կամ մոտ 85 կիլոմետր: Ապագա գիտական եքսպեդիցիան ի նկատի յեւ ունենալու, ուրեմն, տարածությունը Փառախոտից մինչև այժմյան Արյաճ՝ 85 կիլոմետր, Փառախոտից Զողկերտ-Ցոլակերտ՝ 49 կիլոմետր և Փառախոտից մինչև Կարվանսարայի կամ Կուջաղի լեռնանցքը՝ 75 կիլոմետր:

Hariza-ի նույնացմամբ այժմյան Արյակ-ի հետ վերջնականապես վորոշվում ե այն լեռնանցքը և այն մեծ ճանապարհը, վորով շարժվել են դեպի Արտաշատ կամ Դվին հռոմեական, բյուզանդական կամ այլ ոտար զորքերը։ Պարզվում ե, ուրեմն, վոր հռոմեական լեգիոնները Պոմպեյոսի, կորբուլոնի և Ստատիուս Պրիսկուսի առաջնորդությամբ իջել են Արարատյան դաշտ, հավանորեն, Կարվանսարայի կամ Կուջաղի լեռնանցքով։ Նույն լեռնանցքով վորոշվում ե նաև Քսենոֆոնի ճանապարհը։ Նահանջող հույն զորքերը, ինչպես մատնանշել ելինք մեր նախորդ աշխատության մեջ, անցել են Յեփրատ-Արածանին նրա ակունքների մոտ և այստեղից Վարշակի ջերմուկի մոտով չվել Դիաղին-Բագավանի շրջանը։ Իմ նախկին յենթադրությունը, վոր հույները Դիաղին-Բագավանի շրջանից գնացած ալիտի լինեն կողք-Արաքս և վոհ թե Զողկերտ՝ թվում ե ինձ այժմ անհավանական Հարիզա-Կոլուսիա գծի վորոշումը Կարվանսարայի կամ Կուջաղի լեռնանցքով կարեոր մի նոր կովան ե, վորը կարող ե հիմք ծառայել նահանջի ճանապարհը յենթադրելու կարվանսարայի և Կոլուսի-Զողկերտի շրջանով գեղի այժմյան Կարակալե և այնուհետև Ֆաղիս-Արաքսի յերկարությամբ դեպի արևմուտք։

Նույն պատճական գծով և \*Հառիճի ու Կարվանսարայի լեռնանցքի վրայով պետք է յենթադրել նաև խալդական ժամանակներում հին Արմավիրի կապն Արածանի գետի հռվիտների և խալդական Տուշպա-Տոսպ մայրաքաղաքի հետ։ Ուշագրավ ե այդ տեսակետից, վոր Հարիզա կայարանի անունը (—\*Հառիճ—առիճ կամ -յառիճ) համարվում է խալդական (հմմուե Յո. Marquart, Südarmenien und die Tigrisquellen, Wien 1930, էջ 51, ծանոթ. 1), ուստի և այժմյան Արյակ-ը, հավանորեն, զետես հնագույն շրջանում կարող եր զոյլություն ունեցած լինել իրեւ խալդական բնակավայր։ Աճառյանն իր «Հայերէն արմատական բառարանի» մեջ յենթադրում ե, վոր «-առիճ», «-առինճ» կամ Հառիճ նշանակում ե «զյուղ», սակայն նրա մոտ այդ բառը ստու-

գարանված չե և նշանակության կռահումը վիճնելի չե և կարոտ ստուգաբանական հիմնավորման:

Թուսերեն ընդարձակ իմ աշխատության մեջ («О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен», Эривань 1930) մանրամասն յես քննել ելի Հայաստանի առևտրական հին ճանապարհների ուղղությունը զանազան դարաշրջաններում և հաճգել ելի այն յեզրակացության, վոր հոռմեական շրջանի կարավանների մեծ ճանապարհը, վոր գալիս եր Զինաստանից ու Միջին Ասիայից Եկրատանա և ալստեղից Արտաշատ, անցել և Բագավանի ու ալժմյան Քչոփրիքյովի վրայով դեպի Սել ծովի նավահանգիստները։ Hariza-լի տեղադրության վորոշմամբ պարզվում ե ալժմ, վոր միջազգային նշանակություն ունեցող այդ ճանապարհը ևս իջել է Բագավան կարվանսարայի կամ կուջաղի լեռնանցքով։

Նույն աշխատության մեջ մենք մատնացուց ելինք արել, վոր Հին Հայաստանի մեծ ու նշանավոր քաղաքները հիմնված են յեղել առևտրական ճանապարհների մոտ։ Հին Բագավանի մոտ, ինչպես հայտնի յե Փավստոսի վկայությունից (Վ, ԽԳ, Վենետիկ 1889, եջ 259), գտնվել է Զարեհավան քաղաքը, \*Tsumbo-Ծումբ կայարանից հարավ՝ Արճեղ տանող ճանապարհի մոտ՝ Զարիշատը, իսկ Բագավանից Սատաղ գնացող գծի մոտ՝ հին Թեոդոսուպոլիսը։ Այս քաղաքների առևտրական հաղորդակցությունն Արարատյան դաշտի և Արտաշատի հետ վորոշվում ե, գլխավորապես, վերոհիշյալ մեծ ճանապարհով։

Hariza-<sup>\*</sup>Zolocerta գծի հետ միանում եր, հավանորեն, նաև Յերվանդաշատից Բագավան տանող ճանապարհը։ Կամսարականի կարծիքով, վոր ծանոթ ե ալժմյան Սուրմալուի տեղագրական պայմաններին, այս ճանապարհը կարակալելի։ ու կարվանսարայի վրայով ավելի հարմար ե, քան մըուս ճանապարհներն Արասդյոլի և Ասլանլուի լեռնանցքներով։ Հավանական ե ըստ այսմ, վոր Յերվանդաշատի ճանապարհը ևս անցել է \*Zolocerta կայարանի ու հին Զողկերտ-Ցո-

լակերտի վրայով Իրիզ-Արսյու և այստեղից Բագավան: Յերվանդաշատից կա և մի ուրիշ ճանապարհ, վոր գալիս և կողք և այժմյան Ղաթրլու գյուղի վրայով բարձրանում կարվանսարայի լեռնանցքը: Սակայն խիստ կասկածելի է, վոր այս զժվարամատչելի գիծը լիներ կարավանների մըշտական ու բանուկ ճանապարհ:

Գայլատու լճի արևելյան կողմում գտնվող լեռնաստանը, ինչպես պարզ լեռնում և մեր այս և նախորդ ուսումնասիրությունից, պատմական առաջնակարգ նշանակություն ունեցող մի շրջան է: Այս շրջանի ոազմական ու ստրատեգական բացառիկ կարեորությանը ողեաք եւ վերագրել, վոր այստեղ գրեթե յուրաքանչյուր քայլափոխում հանդիպում են բերդերի ու այլ կառուցվածքների բազմաթիվ ավերակներ, վորոնք սակայն կարոտ են զեռ պատմական ու հնագիտական լուրջ ուսումնասիրության: Թե վորքան հետաքրքիր են ու կարեոր այս կողմերում գտնվող հնությունները, այդ լեռնում է Ս. Հայկունու մի քանի համառոտ ութուցիկ տեղեկություններից նրա «Բագրեանդ Ջրաբաշխ գաւառ» աշխատության մեջ, վոր ներքեւ բերում ենք ամբողջությամբ:

Տես «Բագրեանդ Ջրաբաշխ գաւառ», Վաղարշապատ 1894, եջ 363—364:

«Կուլար գիւղին  $\frac{1}{2}$  քիլոմետր հիւսիսն կայ Նորելուկ ուխտատեղին. նաև 1 ժամ յարեելս Ղաթրլու գիւղն և որոյ մօտ գտնուած մի ողի վերան թուխ Մանուկ, ուր միշտ ուխտի կը գնան. իսկ համբարձման մեծ բազմութեամբ: Այս ուխտատեղիէն քիչ բարձր կայ հինաւուրց մի բերդ հսկայ և կոշտ քարերէ շինուած. որ ունի մէջը մօտ 200 տան աւերակ, իւրաքարչիւր տան մօտ հորեր, միջավայրն մի տափարակ սալալատակուած վայր: Սորա կողերու վերան գտնըուած են քանի տեսակ նետի ոլաք և հին գրամ:

Այս գիւղի  $\frac{1}{2}$  ժամ հարաւն ևս կա Աշխ Հիւսէին անունով Եղտի բնակ գիւղն, որոյ մօտ գտնուած ըլ-

լուրի զագաթն ևս աւելի մեծ բերդի աւերակներ կան. բերդի յարեւելս՝ ստորոտին մօտ մի արտի մէջ դըտնուած էր բազմաթիւ պղնձեալ հին դրամներ, տեսակ տեսակ, որոց ոմանք կլայեկուած էին. Այս դրամներն ոշպէս այլ դրամներ ամփոփած էի և մտադիր էի այս տեղ որոց պատկերն ներկայացնել, դժբախտաբար այս ամբան կողոպտեցին:

Այս կողմերն այս տեսակ հին բերդորաչք շատ կան, մանաւանդ յերկու Գանձակներու, Աղարակի և Ղուրու-Աղաճի միջավայրն, Սինէկայ ջրի աջ բարձրութեան վերայ եղած Փարչինիս գիւղն, որոյ վերևն կաչ մի անհպելի հին և կոշտ քարերէ շինուած բերդ, ուր կապաստանէին, կասեն, կողբայ և շրջակայ գիւղօրաչքն գտնուած թուրք և հայ հասարակութիւնը՝ Երբ լեզկիներու յործակումը կը լինէր այս երկրի վերան»:

Պեվտինգերյան քարտեղի մանրախույզ քննությամբ ճշտվում են, ինչպես տեսնում ենք, Artaxata-Bagauna գծի վրա գտնվող բոլոր կայարանները՝ Artaxata=Արտաշատ, Paracata=Փառախոտ, Coloccia (Zotozeta Իտալիննացու մոտ)=Զողկերտ, Ցոլակերտ, Hariza=Արյաճ, Հառիճ և Raugonia (Ragauna Իտալիննացու մոտ)=Բագաւան. Մութ և մնում սակայն Զողկերտ-Ցոլակերտի տեղադրության խնդիրը, ուստի անհրաժեշտ և հետագալում ուղարկել մեր մատնանշած շրջանը դիտական հատուկ արշավախումբ և ուսումնասիրել տեղում թե այս խնդիրը և թե, ընդհանրապես, այն վայրերն ու ճանապարհները, վորոնք կարող են վերջնականապես ոլարդել պատմական հին ճանապարհների ուղղությունը:

Յերեվան.

Եռյեմբեր 1931 թ.

Prof. Dr. Agop Manandian.

## Die Station Hariza der Peutingerschen Tafel. Zusammenfassung

1. In meiner vorigen ausführlichen Abhandlung über das Itinerar Artaxata-Satala und Artaxata-Tigranocerta ist unter anderm auch die Strecke Artaxata-Paracata-Coloceia-Hariza-Raugonia behandelt worden (siehe Bulletin des Instituts der Wissenschaften und Künste SSRA, № 5, 1931, S. 65-89; vgl. «О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен», Эривань 1930, S. 101-124). Die neu gewonnenen Ergebnisse über diese Strasse hatte ich am Schlusse meiner Abhandlung in vier folgenden Thesen Zusammengefasst.

a) Der Weg von Artaxata nach Bagauna (Raugonia, Ra-  
gauna=Bagauna, siehe Prof. Dr. J. Marquart, Die Entste-  
hung und Wiederherstellung der armenischen Nation, Ber-  
lin 1919, S. 23 und 69), führte nicht über den Tschingil-  
Pass oder über Kulp-Parnaut, wie W. Belck und K. Kie-  
pert vermuten, sondern über Bulag-Basch (= Paracata =  
Փալախն, siehe W. Belck, Beiträge zur alten Geographie  
und Geschichte Vorderasiens, II, Leipzig 1901, S. 83-93)  
nach Karakala und von da durch die Gegend unweit von  
Gaylatu-See (Balyk-Göl) nach Ütschkilissa (= Bagauna).

b) Coloceia auf der Tabula Peutingeriana und Zotozeta  
beim Geographen von Ravenna, die in \*Zolocerta zu ver-  
bessern sind (Colo-, Zoto-="Zolo- und -ceia,-zeta="certa),  
entsprechen dem armenischen Չողկերս=Ցոլակերս.

c) Die Station \*Zolocerta=Զոլկերս, Յոլակերս, die 33 mp.  
oder 49 kilom. von Paracata-Փառախոն entfernt war, lag  
ungefähr an der Stelle des heutigen Karakala, ostwärts  
von Kulp.

d) Der Rückzug des Xenophons und der Zehntausend  
vom Quellgebiet des Euphrat bis zum Phasis-Araxes er-  
gibt sich aus der Ebene von Diyadin-Շահման (Bagauna)  
in die Gegend von Kulp-Karakala (= \*Zolocerta)  
und weiter westwärts volle 7 Tage längs des Phasis-  
Araxes.

2. Nach dem Erscheinen meiner Abhandlung machte  
mich in einer mündlichen Mitteilung der gelehrte armeni-  
sche Landwirth Stephan Kamsarakan, welcher in dem Krei-  
se Surmalu aufgewachsen und mit der heutigen Topogra-  
phie der südlichen Araxes-Ebene wohlbetraut ist, auf eini-  
ge streitige Punkte der oben angeführten Thesen aufmer-  
ksam. Auf Grund eigener Kentniss der Ortslagen gibt Kam-  
sarakan die genaue Richtung der Strecke Coloeia-Raugo-  
nia durch den Pass von Karawansaray an (=Kudschach-Pass,  
siehe die Zehnwerstkarte des russischen Generalstabs, Bl. 99:  
перевал Каравансарай; vgl. die Karte von Lynch: перевал  
Куджакаский). Er hält zugleich die Gleichsetzung der Station  
Coloeia-Zotozeta= \*Zolocerta, arm. Զոլկերս, Յոլակերս mit  
dem heutigen Karakala für unwahrscheinlich, weil Karaka-  
la zu weit nordwestlich und von der genannten Bergstrasse  
abseits lag.

3. Die Sicherheit dieser neuen Andeutungen würde na-  
türlich wesentlich erhöht, wenn sie sich auch noch durch  
eine Gegenprobe stützen liesse. Dies ist nun in der Tat der  
Fall. Auf der römischen Karte steht zwischen Coloeia und  
Raugonia die Station Hariza. Diese Station glaube ich jetzt  
identifizieren zu können: es ist das Flecken Arudsch  
(Արծիշ), das nicht allzuweit südlich vom Karawansaray-  
Passe liegt (siehe die Zehnwerstkarte des russischen Gene-

ralstabs, Bl. 99). Hariza entspricht offenbar dem schriftarmenischen *\*Հարիս*. Was die gegenwärtige Namensform betrifft, so konnte das armenische *Հարիս* fremdsprachlich auch *Հարիս* lauten und im russischen regelrecht [h]Арудж umschrieben werden. Die Gleichung Hariza=*\*Հարիս*=Арудж ist völlig schlagend nicht bloss bezüglich der Namen, sondern auch der Entfernungen. Die Entfernung zwischen Hariza und Raugonia (=Bagauna) beträgt auf der Tabula 24 mp.=zirka 36 km., und es ist zutreffend, dass diese Distanz genau der Strecke Ütschkilissa (=Bagauna) – Arudsch (=Hariza) entspricht. Die Identität Hariza=*\*Հարիս*=Арудж wird demnach aufs beste bestätigt.

4. Jetzt wird es möglich auch die Lage der Station Coloeia (=*\*Zolocerta*) einer erneuten Prüfung zu unterziehen. In meiner vorigen Abhandlung hatte ich, Alischan folgend (siehe «Ajrarat», Venedig 1896, S. 123-124), Ղողկերս=Յոլսկերս (Coloeia) dem heutigen Karakala gleichgesetzt. Diese Behauptung steht jedoch im Widerspruch zur obigen Deutung der Ortslage von Hariza und ist, wie sich zeigen wird, offenbar irrig. Bei der näheren Untersuchung dieser Frage ergibt sich, dass die Route von Hariza nach Coloeia, welche durch den Pass von Karawansaray den heutigen Aghri-Dagh überstieg, unmöglich über Karakala geführt haben kann, da jenes in ganz anderer Richtung lag. Die Entfernung zwischen Hariza und Coloeia ist nach der römischen Karte 24 mp.=zirka 36 km. Hiernach muss also die Station Coloeia (=*\*Zolocerta*=Ղողկերս=Յոլսկերս) 36 km. nordlich von Arudsch an den Strassen nach Tscharuchschi oder nach Chosch-Chabar (siehe die Zehnwerstkarte des russischen Generalstabs, Bl. 99: II. Чарухчи и Хом-Хабар) gesucht werden. Nach der russischen Zehnwerstkarte liegt das heutige Flecken Arudsch am Flusse Balyk-tschai, in der Nähe von Misun, etwa 10 km. südlich vom Karawansaray-Passe. Damit kommen wir für Coloeia oder

**Չողկերս=Յոլսկերս**, das noch 26 km. vom Karawansaray-Passe (7245 Fuss) entfernt war, genau in die Gegend am Nordrande des Aghri-Dagh, womit die Angabe der Geschichte des Moses Chorenathsi (I, 12 "մո խորչիւ լեռնաշին", "an den Schluchten des Bergfusses") übereinstimmt. Für die genauere Feststellung der Lage von Coloceia müsste natürlich die Gegend südwestlich von Chosch-Chabar am Orte untersucht werden.

5. Die Bestimmung des Passes, durch welchen die Route der Tabula die Aghri-Dagh-Berge überstieg, ist für die historische Topographie der römischen und byzantinischen Zeit von grosser Wichtigkeit. Es ist nun mehr als wahrscheinlich, dass über Hariza und durch den Pass von Karawansaray die grosse Heerstrasse führte, welche von Bagrevand aus den Zugang zum centralen Armenien und der Hauptstadt Artaxata vermittelte. Man muss ferner annehmen, dass die römischen Heere welche unter Pompeius, Cn. Domitius Corbulo, Statius Priscus und anderen Feldherrn in Ajrarat eindrangen, zogen gegen die Hauptstadt Artaxata durch denselben Pass. Es ergibt sich demnach, dass derselbe Weg über Hariza auch in chaldischer und achaemenischer Zeit als Verbindungsleitung zwischen dem Quellgebiet des Arsanias und der alten chaldischen Stadt Armavir eine geschichtliche Rolle spielte. Es lässt sich ausserdem genauer präzisieren den Marsch der Zehntausend vom Eupratübergang bis Phasis-Araxes. Der Rückzug Xenophons und der Zehntausend ergibt sich ganz genau über Hariza und den Karawansaray-Pass nach Karakala und weiter westwärts volle 7 Tage längs des Phasis-Araxes.

6. Der Name Hariza-Հարիզա ist nach Markwart (siehe Südarmenien und die Tigrisquellen, Wien 1930, S. 51\*) chaldischen Ursprungs. Derselbe Name kommt als zweites Glied in vielen Ortsnamen vor (wie Խոյսայտին, Բազայստին, Տիրանին, Ջիբանին u. s. w.). Adjarian, Armenisches

etymologisches Wurzelwörterbuch, Eriwan 1926, I, vermutet, dass -սովն, -յառին, հառին die Bedeutung von Dorf habe. Er unterlässt leider diese Angabe etymologisch zu erklären, so dass man nicht weiss, worauf sich seine Behauptung stützt. Ist aber der Name Hariza-Արւճ chaldisch, so dürfen wir für möglich halten, dass dieser Wohnort ehemals von Chal dern besiedelt war.

7. In meinem Buch «Ueber Armeniens Handel und Städte in Verbindung mit dem Welthandel des Altertums», Eriwan 1930 (russisch), habe ich festgestellt, dass der Transithandel über Artaxata im Wirtschaftsleben Armeniens eine erhebliche Rolle spielte. Die Routen Artaxata-Satala und Artaxata-Tigranocerta, wie ich im erwähnten Buch ausführlich erörtert habe, dienten einem regen Karawanenhandel zwischen Centralasien, China und den Häfen des Schwarzen Meeres und zwischen Nordarmenien und Mesopotamien. Es ist höchst beachtenswerth, dass die bedeutenderen Städte Armeniens in der Nähe von diesen grossen Strassen lagen: nördlich vom Zusammenfluss des Achurean (=Arpa-tschaï) und Araxes lag die grosse Handelsstadt Ervandaschat; die Lage der Stadt Zarchavan ist bei dem armenischen Geschichtsschreiber Faustos («Geschichte Armeniens», Venedig 1889, V, 43, S. 259) unweit vom wichtigen Knotenpunkte Bagauna angegeben; die Stadt Zarischat lag südlich vom Knotenpunkte \*Tsumbo-Ծոմպ an der Strasse von \*Tsumbo nach Artschesch; und auf dem grossen Karawanenwege nach Satala und Trapezunt entstand in byzantinischer Zeit die befestigte Handelsstadt Theodosiopolis. Nachdem oben die Lage von Hariza festgestellt ist, ergibt sich jetzt, dass auch die Handelswege dieser Städte, sowie die grosse Karawanenstrasse des Aussenhandels, über das heutige Arudschan und den Pass von Karawansaray führten.

8. Als Resultat unserer Untersuchung ergibt sich zugleich, dass das Gebirgsland östlich von Gaylatu-See (=Ba-

lyk-Göl) als Durchgangsort nach Ajrarat und Nordarmenien strategisch und militärisch von grösster Wichtigkeit war. Für die eminente geschichtliche Bedeutung dieses Durchgangslandes sprechen unter anderm die dort gefundenen Ruinen (siehe S. Haykuni, Bagrevand, Th. I, Vagarschapat 1894, S. 363-365, armenisch). Die meisten von ihnen sind Trümmer von bedeutenderen Festungen und Burgen, welche die strategisch wichtigen Punkte und die Durchgangsstrassen beherrschten. Wie diese Ruinen, so auch das ganze Gebirgsland zwischen dem Gaylatu-See und dem Karawansaray-Pass, sind niemals erschöpfend untersucht worden. Eine solche Erforschung am Orte kann aber der schliesslichen Lösung unserer neuen Aufschlüsse dienlich und förderlich ein.

## РЕЗЮМЕ

Настоящая статья является дополнением и продолжением нашего исследования о главных путях Армении по *tabula Peutingeriana* (см. „О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен“, Эривань 1930, стр. 101-124 и „Древние пути Армении“, Известия Института наук и искусств Армении, Эривань 1931, № 5, стр. 65-89) и посвящена разъяснению названия и местоположения станции *Nariza*. Станция эта отождествлена мною с нынешним местечком Арудж (=арм. \*Հարժ), лежащим недалеко от Мысона, на расстоянии около 10 километров к югу от Каравансарайского или Куджахского перевала. Правильность этого предположения подтверждается тем, что расстояние между \**Vaganva* и *Nariza*, показанное в Таблицах 24 тр. или 36 килом., соответствует точь в точь расстоянию между Багаваном (Учь-Килиса) и нынеш. Аруджем.

Выяснением местонахождения станции *Nariza* разрешается также спорный вопрос о местоположении станции *Coloceia* (-\**Zolocerta*, арм. Զոլկերտ или Ցոլշկերտ), которая отстояла от *Nariza* на расстоянии 24 тр. или 36 килом. В предыдущем моем исследовании \**Zolocerta*-Цолакерт отождествлен был мною согласно с Алишапом (Айрапат, Венеция 1890, стр. 123-124) с нын. Каракалой. Предположение это оказывается, однако, явно ошибочным. Приурочиванием станции *Nariza* к нынеш. Аруджу выясняется, что местонахождение станции \**Zolocerta*-Цолакерта неизвестно.

кerta, лежавшей на расстоянии 26 километров к северу от Каравансарайского перевала, следует искать не в районе Каракалы, а в предгорной местности к юго-западу от Хош-Хабара и Н. Чарухчи.

Определением местоположения станции Hariza устанавливается, как видим, и тот древний перевал, через который пролегала линия Artaxata—\*Bagauna. Через Каравансарайский или Куджахский перевал следует предположить, как подробно указано в нашей статье, не только вторжения римских легионов Помпея, Корбулона, Статия Приска в область Айрарат, но и путь отступления «десяти тысяч» греков и Ксенофона к реке Фазису-Араксу, а также передвижения халдов в приаракские долины и в древний Армавир.

Понятно поэтому, что район Каравансарайского перевала и вся горная область к востоку от озера Гайлату имели первостепенное стратегическое значение и, являясь воротами Центральной Армении, охранялись могущественными крепостями, развалины которых сохранились до нашего времени.

Топографические и археологические изыскания на месте могли бы, мне кажется, окончательно выяснить как местоположение \*Zolocerta-Цолакерта, так и точное направление древнего пути из Hariza в \*Zolocerta.



Rekonstruktion des Itinerars von Hariza nach \*Zolocerta (=Coloceia)

## ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏՈՂԱԽԹՑՈՒՆԵՐ)

Արաբական արշավանքների և արաբական տիրապետության ժամանակ Հայաստանում տեղի ունեցած անցքերի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդվում վոչ միայն հայկական, այլ և արաբական, ասորական և բյուզանդական աղբյուրներում. սակայն այդ տեղեկությունները խիստ հակասական են և ժամանակագրական իրանց տվյալներով՝ խառնաշփոթ ու անհաշտելի։ Չնայած վոր Հայաստանի պատմության այս շրջանը քննության և առնված բանասիրական ու պատմագիտական բազմաթիվ աշխատություններում, սակայն ժամանակագրության վիճելի հարցերից շատերը մնում են մինչև այժմ շփոթ ու անորոշ վիճակում։

Ուշագրավ են նաև, վոր ժամանակագրական ակնքախ այդ սխալները, մանավանդ, արաբական առաջին արշավանքների մասին Հայաստանում, կրկնվում են շարունակ վոչ միայն հայագիտական, այլ և յեվրոպական ու ուսական նորագույն ուսումնասիրություններում, վոր վերաբերվում են բյուզանդական կայսրության և արաբական խալիֆայության պատմության։ Արդ՝ աչքի առաջ ունենալով ճշտված ու հաստատուն ժամանակագրության կարևորությունը, նաև ժամանակագրական այն անձշտությունները, վոր հանդիպում են վերոհիշված աշխատություններում, առաջ ենք բերում ներքեւ մեր մի քանի դիտողությունները արաբական առաջին արշավանքների ժամանակագրության մասին, վոր թվում են մեղ հիմնավոր ու հավանական։

## 1. ԱՐԱԲՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՄՈՒՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ 640 ԹՎԻՆ.

Հայկական և արաբական աղբյուրների վկայություններից հայտնի յե, վոր արաբներն առաջին անգամ մտել են Հայաստան հարավից՝ հյուսիսային Միջազգետքը նվաճելուց հետո։ Թեև այդ վկայությունները վորոշ կետերում իրանց բովանդուկությամբ տարբերվում են, սակայն արշավանքի ժամանակի նկատմամբ նրանք, ինչպես կըտեսնենք, միանգամայն համերաշխ են։

Առաջին այս մեծ արշավանքի մասին հայկական աղբյուրները տալիս են հետեւյալ տեղեկությունները։

1. «Յովհաննու Մամիկոնեանի եպիսկոպոսի, Պատմութիւն Տարօնով», Վենետիկ 1832, եջ 57-58.

«Ապա ի սուն ամի ելանէ Հերակլ, և սպանանէ զիսորով. և յիշեաց զերդումն՝ զոր ընդ Տիրան և ընդ ինքն, և կացուցեալ մարդպան ամենայն Հայոց, և ինքն զնաց ի Կոստանդինուպոլիս. Եւ յետ ուր ամի եկն Արդղուահիմ քեռորդի Մահմետի բազում ազիսիւ, ութեատասն հազար առնեմիոյ ընդ իւր բերեալ, խնզրէր հարկս ի Հայոց։ Իսկ Տիրան արձակեաց ժողով լինել համօրէն զօրու ի պատերազմ. . . . Իսկ Արդղուահիմ անցանէ ի Հայք և ի Բասեան, ի Վիրք և ի Զավախս և ի Վանանդ. և առեալ հարկս, դառնայ ի Տաճկաստան»։

2. «Պատմութիւն սրբոյն Ներսիսի և զիւտ նշխարաց», Սովերք հայկականք, Ե, Վենետիկ 1853, եջ 43-44.

«Քանզի Հերակլ արքայն Յունաց յետ ուրսաւն ամի բուսկանին Հայոց ելանէ ի սպատերազմ ընդ Խոսրով արքային Պարսից և սպանանէ զնա. և յետ ուր ամի այսմ լինելոյ՝ Արդղուահիմ քեռորդին Մահմետի՝ ելանէ ութեատասն հազարաւ ի Հայս, խնզրել հարկս և կոտորել զզօրս քրիստոնէիցն որ ի Տարաւն գաւառի. և անցանէր ի Հայք և ի Բասեան, ի Վիրք և ի Զաւախս

ևի Վանանդ. և առեալ հարկս դառնայ ի Տաճկաստան»:

Վերոհիշվալ վկայությունները, ինչպես տեսնում ենք, գրեթե նույնն են: Յերկրորդ վկայությունը քաղված ե, հավանորեն, Հովհան Մամիկոնյանի պատմությունից. հնարավոր ե սակայն, վոր իրար համապատասխանող այս վկայությունները ծագում են մի յերբորդ՝ մեզ մի անհայտ աղբյուրից:

Յերկրորդ վկայության այն տեղեկությունը, թե իրը Խոսրով Բ-ին սպանել ե Հերակլը «յետ ութուն ամի քուականին Հայոց» ճիշտ չե: Ինչպես հայտնի լի, Խոսրով Բ-ի սպանությունը Կավատի հրամանով տեղի յեր ունեցել փետր. 25-ին 628 թվին, այսինքն՝ Հայոց ՀԶ թվին (=23 հունիս 627—22 հունիս 628 թ.): Սակայն մեր հաշիվների համար այդ սխալը կարեոր չե: կարեոր ե այն, վոր արաբական այս արշավանքի տարեթիվը վորոշված ե «յետ ութուն» և «ութ ամի» թվականության Հայոց:

Հիմնվելով վերոհիշվալ վկայությունների վրա՝ պատմաբանները և բանասերները լինթաղընել են արշավանքի ժամանակը 636 կամ 639 թվականներին:

636 թվին — Զամշյան (Պատմություն Հայոց, Բ, Վենետիկ 1785, եջ 342), Բասմաջյան (Խոկական պատմություն Հայոց, Պոլիս 1919, եջ 295) և ուրիշները, իսկ 639-թվին—Dulaurier (Recherches sur la chronologie arménienne, Paris 1859, եջ 225), Tournebize (Histoire politique et religieuse de l'Arménie, Paris 1900, եջ 96), Arslan Kevork (Etudes historiques sur le peuple arménien, Paris 1909, եջ 275) և Morgan (Histoire du peuple arménien, Paris 1919, եջ 115):

Բանասերների առաջին խումբն արշավանքի թվականը հաշվել ե Խոսրով Բ-ի մահից ութը տարի հետո (628+8) 636 թվին, իսկ յերկրորդ խումբը հենվել ե, ըստ յերեսութին, Dulaurier-ի հաշվի վրա (Recherches, եջ 225), վորը յերկրորդ վկայության համաձայն արշավանքի թվականը

յենթագրել եր հայոց 88 թվականին, այսինքն՝  $551+88=639$  թվին:

Ինձ թվում ե, վոր թե առաջին և թի յերկրորդ հաշիվը չեն համապատասխանում վերոհիշյալ վկայություններին: «Յետ ուր ամի» Խոսրով Բ-ի մահից, այսինքն՝  $628+8=636$  թվից հետո՝ կըստանանք վհչ թե 636, այլ 637 թիվը, իսկ «յետ ուրսուն ամի քուականին Հայոց» և «յետ ուր ամի այսմ լինելոյ», այսինքն՝  $551+88=639$  թվից հետո՝ արշավանքի թվականը կըլինի դարձյալ վհչ թե 639, այլ 640 թվին:

Ի նկատի ունենալով, վոր վերոհիշյալ յերկրորդ վկայության մեջ ժամանակագրական տեղեկություններն ավելի լրիվ են և ծագում են, հավանորեն, սկզբնական աղբյուրից, պետք ե յենթագրել, վոր Հովհան Մամիկոնյանի պատմության այժմյան բնագրում ժամանակագրական նույն տեղեկությունները համառոտված են, ուստի և չեն կարող հիմք ծառայել արշավանքի թվականի վորոշման: Յեթե այդ այդպես ե, ուրեմն, առաջին այս արշավանքի ժամանակը դրվելու յե ըստ վերոհիշյալ վկայության, վհչ թե 637, այլ 640 թվականին:

Արաբական նույն այս արշավանքին են վերաբերվում, ինչպես ճիշտ դիտել ե Մկրտիչ Ղազարյանն իր «Armenien unter der arabischen Herrschaft» աշխատության մեջ (Marburg 1903, եջ 16—17), արաբական աղբյուրների հետևյալ վկայությունները.

1. Բելազորի, հրտք. de Goeje, Leiden 1870, եջ 176. Հայերեն թարգմանությունն առաջ ենք բերում Բագրատ Խալաթյանցի աշխատությունից՝ «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», Վիեննա 1919, եջ 74—75:

«Իյադ նվաճեց Ամիդ առանց ճակատամարտի՝ Ուռհայի խաղաղության հիման վերա, նույն որինակ և Մայաֆարեկին, իսկ Կաֆարտութ ամրոցը և Մծրին՝ կռվով, նույն պայմանների հիման վերա. նույն կերպ Տուր Աբղին, Մարդին ամրոցը և Դարա, իսկ Քարդա և Բաղարդա՝ Մծրինի դաշին հիման վերա:

Նորա մոտ յեկավ Զավազանի իշխանը և խաղաղություն կապեց նորա հետ՝ յուր հողից նորան հարկ տալու պայմանով։ Այս բոլորը կատարեցավ 19 թ. յեւ Մուհառամի որերից (հաւքած)՝ 20 թ.։ Իյադ նվաճեց Արգն Մծբինի խաղաղության հիման վերա և՝ անցնելով կիրճից՝ հասավ Բիթլիս, յեկավ Խլաթ և հաշտություն կապեց քաղաքի իշխանի հետ։ Գալով Աղի ջուրք [Ղազարյան, Armenia unter der arabischen Herrschaft, եջ 16՝ «Zu den saueren Quellen»=«Թթու ջուրք»], վոր Հայաստանումն եր, նա չանցավ այն, այլ վերադարձավ և դրեց Բիթլիսի տիրոջ վերա նույն հարկը, վոր նա Խլաթի (բնակչաց), մեծամեծաց և իշխանի վերա յեր դրած։ Այստեղից Իյադ անցավ Ռաքքա, ապա Հիմս, ուր նորան Ոմար կառավարիչ նշանակեց. վախճանեցավ 20 թ.։

2. Տաբարի, հրտր. de Goeje, Leiden 1879/93, I, 2506. հայերեն թարգմանությունը տես «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», եջ 80<sup>1</sup>

«Իյադ ուղարկեց Ոսման Ի. Արի-Լ-Աասին Զորբորդ Հայք. այստեղ Սաֆֆան Ի. Մուաթթալ Մուլամին նահատակեցավ՝ տեղի ունեցած մի ճակատամարտի մեջ։ Բնակիչք խաղաղություն հաստատեցին Ոսման Ի. Արի-Լ-Աասի հետ՝ յուրաքանչյուր ընտանիքից մի դենար վճարելու պայմանով»։

3. Տաբարիի հիշյալ վկայությունը մեջ երերոված նաև Իրն-ել-Աթիրի մոտ. հմմտ. «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», եջ 127։

Արաբական աղբյուրների տեղեկությունները, ինչպես տեսնում ենք, տարբեր են մի քանի կետերում թե իրարից և թե վերոհիշյալ հայկական վկայություններից։ Այդ շեղումները և տարածալնությունները բացարկվում են մասամբ նրանով, վոր յոթերորդ դարի անցքերի պատմությունը հիմնված և արաբական աղբյուրներում, պլխավորապես, բանավոր հիշողությունների և ավանդությունների վրա։ Բացի

այդ՝ պետք են նաև ինկատի ունենալ, վոր հայկական վկայություններում հիշատակված են արարական արշավանքները Տարոնում և Հայաստանի հյուսիսային շրջաններում, իսկ արարական աղբյուրների մեջ՝ հյուսիսային Միջազգետքում և Չորրորդ Հայքում։ Հնարավոր ենույնպես, վոր արարական զորքերը կարող ենին ներս խուժած լինել զանազան ուղղությամբ տարբեր զորավարների առաջնորդությամբ։

Տարարին և Իրնել-Աթիրն արշավանքի ժամանակը դնում են Հեջիրի 19-ին, այսինքն՝ 640 թվին (Հեջիրի 19 թիվը=640 թվին, մինչև դեկտեմբերի 20-ը), իսկ Բելազորի՝ Հեջիրի 19-ին և 20 թվի «Մուհամուամի» որերին, այսինքն՝ 640 թվին մինչև 641 թվի հունվար ամսի կեսերը։ 20 թվին Մուհամուամ ամսի սկիզբն ընկնում են դեկտեմբերի 21-ին 640 թվի, ինչպես տեսանք, արշավանքի նույն այս 640 թվականը մատնանիշ եւ արված նաև «Պատմութիւն սբ. Ներսիսի» գրվածքում։ Ուրեմն՝ վերոհիշյալ արշավանքի ժամանակի նկատմամբ հայկական և արարական աղբյուրների վկայությունները միմյանց հետ համերաշխ են և համաձայն։

Վոր արարների մուտքը Հայաստան չեր կարող լինել 636 կամ 637 թ.<sup>1)</sup>, այդ միանգամայն վորոշ եւ ու անգիճելի։ Արարները չենին կարող Հայաստան մտնել Միջազգետքը և նրա գլխավոր քաղաքները գրավելուց առաջ։ Իսկ Միջազգետքի նվաճումը, ինչպես հայտնի յե արարական, ասորական և բյուզանդական աղբյուրների վկայություններից, տեղի յեր ունեցել 639—640 թ.։

Ասորական աղբյուրներից Միքայել Ասորին, որինտեղ, պարզ վկայում ե, վոր արարներն առաջին անգամ անցել են Յեփրատ գետը և շարժվել դեպի հյուսիս «951 թվին հունաց, 29 Հերակլի, 18 արարների և 6 Ոմարի», այսինքն՝ 639—640 թ. (տես Chronique de Michel le Syrien, éd. par Chabot, T. II, Fasc. III, եջ 426)։

<sup>1)</sup> Նույն այս թվականն ունի նաև Ասողիկը (Պետեր. 1885), եջ 98<sup>1</sup> «Յաւուրս յայսոսիկ և լիշխանութեանն Թէոդորոսի Ռշտունւոյ, յջջ թուականին եղե առաջին ելք ի Հայս Տաճկաց, հրամանաւ Օմարայ»։

Ինձ թվում ե՞ հիմնվելով բոլոր այս ուշագրավ դիտությունների վրա՝ կարող ենք վստահորեն յեզրակացնել, վոր արարներն առաջին անգամ մտել են Հայաստան հյուսիսային Միջազգետքի կողմից վհչ թե 636, 637 կամ 639 թվականներին, ինչպես այդ մատնացուց ե արվում հայ և ոտար ուսումնասիրություններում, այլ 640 թվին։

## 2. ԴՎԻՆԻ ԱՌՈՒՄԸ 640 Թ., ՀԱԿՏԵՄԲ. 6-ԻՆ, ՈՒՐԲԱԹ.

Վոր արարներն առաջին անգամ մտել են Հայաստան Միջազգետքի կողմից 640 թվին, այդ դժվար չե յեզրակացնել նաև Սերեսի վկայությունից, վոր ժամանակակից ե յեղել յոթերորդ դարի անցքերին։

Ներքե մենք կըտեսնենք, վոր Դվինի առումը համաձայն Սերեսի վկայության տեղի յեր ունեցել 640 թվի հոկտեմբերի 6-ին։ Արարական զորքերը յեկել ելին Դվին «Ասորեստան կողմանէ»՝ Տարոնը, Բղնունիքը և Աղիովիտը նվաճելուց հետո։ Պարզ ե, ուրեմն, վոր Սերեսի վկայությունը ևս վերաբերվում ե արարական առաջին արշավանքին, վոր հիշված ե նաև Հովհան Մամիկոնյանի և «Պատմութիւն սթ. Ներսիսի» վերոհիշյալ լերկերում։

Կարևոր այս հետևությունը, վոր անտարակուսելի յե, աչքաթող ե արված բանասիրական ու պատմական հայ և ոտար աշխատություններում։ ուստի անհրաժեշտ ե նորից կանգ առնել այս խնդրի վրա և ուշադիր կերպով քննել հայկական, ասորական և արարական աղբյուրների տեղեկությունները, վոր հիմք են ծառայել Դվինի առման թվականի վորոշման։

Վկայությունները Դվինի առման թվականի մասին բաժանվում են յերեք խմբի, վոր մեջ ենք լիերում տեղ տեղ հապավումներով։

## Առաջին խումբ (հնագույն)։

1. «Պատմութիւն Սերէսսի եպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս 1912, եջ 175, գլ. 1։

«Եւ ել զաւը ապականիչ յԱսորեստան կողմանէ ընդ ճանապարհս Զորոյ յաշխարհն Տարօնոյ. առին զնա և զԲզնունիս և զԱղիովիտ։ Եւ ճանապարհ կալեալ ի Բերկըոյ ձորն ընդ Որդսպոյ և ընդ Գոգովիտ՝ թափեցան յԱյրարատ։ Եւ ոչ ոք կարաց ի զաւրացն հայոց արկանել գոյժ ի Դըւին աւան. բայց արք երեք յիշխանացն, որք երթային ժողովել զզաւրն ճապաղական՝ Թէոդորոս Վահեունի, և Խաչեան Առաւեղեան, և Շապուհ Ամատունի։ Որք զնացեալ փախստական ի Դըւին, և հասեալ ի կամուրջն Մեծամաւրի, ի բաց աւերեցին, և ինքեանք անցեալք գոյժ արկանել ի յաւանին։ Եւ ի բերդն ժողովեցին զամենայն մարդիկ աշխարհին՝ որ եկեալ էին ի կութս այգեստանին։

Բայց Թէոդորոսն զնացեալ ի Նախճաւան քաղաք, եւ հասեալ թշնամին Բուշայն ի կամուրջն Մեծամաւրի ոչ կարաց անցանել. բայց ունէին առաջնորդիւրեանց զՎարդիկ իշխան Մոկաց, որ կոչէր Ակնիկ։ Ապա անցեալ ընդ կամուրջն Մեծամաւրի, հարին ասպատակաւ զամենայն երկիրն, և ժողովեալ զաւար և զգերութիւն բազում յոյժ, և եկեալ բանակեցան ի լեզրմայրւոյն Խոսրովակերտի։

Եւ եղել յաւուրն հինգերորդի դիմեցին ի վերալ քաղաքին. մատնեցաւ քաղաքն ի ձեռն նոցա. քանզի արկին մուխ շուրջանակի, մերժեցին ծխովս և նետաձգութեամբն զալահապանս պարսպին և կանգնեալսանդուխս՝ ելին ի պարիսպն և անկեալ ի ներքս բացին զդուռն քաղաքին։ Եւ դիմեալ ի ներքս զաւրք թշնամեացն սատակեցին սրով զբազմութիւն քաղաքին՝ ելին և բանակեցան ի նմին բանակետեղն. որ աւր ի էր ՏԵ ամսոյն՝ յաւուր ուրբարի։ Եւ դաղարեալ աւուրս ինչ-

ելին և գնացին ընդ նոյն ճանապարհ՝ ընդ որ եկեալն էին. Եւ խաղացուցին զբազմութիւն գերւոյն՝ ԼԵ հազար ոգի։ Իսկ իշխանն հայոց Ռշտունեաց տէրն դարանակալ եղեալ ի Գոգովիտ գաւառի՝ դիմէ ի վերայ նոցա սակաւուք։ Եւ ոչ կարաց զղէմ ունել նոցա. փախստական լինի առաջի նոցա. և նոքա զհետ մտեալ նոցա՝ սատակէին զբազումս ի նոցանէն. և ինքեանք չոքան անցին յԱսորեստան։ Եւ եղեւ այս յամս նզրի կարուղիկոսի. Իսկ ի ձեռն այնք պատերազմի ի կայսերէ հրաժան հասեալ զաւրավարութեանն Թէոդորոսի Ռշտունեաց տեառն՝ հանդերձ պատրկութեան պատուով։

Այս ամենայն լինի ի ձեռն կաթուղիկոսին Ներսիսի՝ որ յաջորդեցաւ ի նմին ամի լաթոռ կաթուղիկոսութեան՝ փոխանակ Եղրի կաթուղիկոսի։

2. «Անանուն ժամանակագրութիւն», Վենետիկ 1904,  
եջ 77<sup>1</sup>

«Կոստանդին՝ որդի Կոստանդիանի, թոռն Հերակղի, ամս քաննեինն. ի սորա երկրորդ ամին առաւ Դուին ի Տաճկաց (ԻԲՈ. «ԻՂ թուականին»). և եղեւ համար գերելոցն լեն»։

3. Chronique de Denys de Tell-Mahré, pub. et trad.  
par J.-B. Chabot, Paris 1895, եջ 6<sup>2</sup>

«952 թ. (640—641), արաբները պաշարեցին Դարան և հարձակվեցին այդ քաղաքի վրա։... Նույն այս բվին արաբները պաշարեցին Դվինը (Adabin), ուր սպանվածների թիվը խիստ մեծ եր՝ մինչև 12.000 հայ։

Հմմտե «Պատմութիւն հայոց արարեալ կիրակոսի վարդապետի Դանձակեցւոյ», Թիֆլիս 1910, եջ 58<sup>3</sup> «ի կոտորելն իսմայիլի զքաղաքն Դուին երկոտասան հազար»<sup>4</sup>։

1) Տես նաև «Սամուելի քահանայի Անեցւոյ, Հավաքմունք ի դրոց պատմագրաց», Վաղարշապատ 1893, եջ 80<sup>5</sup>

«Արդ՝ յաւուրս կոստանդի որդւոյ Հերակլեայ՝ առաւ Դուին ի Տաճկաց, ասէ պատմադիրն, և սպանին յաւուր սրբոյ յայտնութեան, ի ս. վկայարանի Ա. Սարգսի ԲԺ-ան Ծ և արեամբ կոտորելոցն ծածկեցաւ սեղանն սուրբ և աւազանն. և զայլսն զերեցին՝ աւելի քան զԼՌ»։

Յերկրորդ խումբ (լուս արաբական ավանդության)։

4. Բելազորի, տես «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», եջ 40<sup>1</sup>

«Ինձ պատմել եւ Մահմեդ ի. Սադ, վոր լսած եր ալ-Վակիրից, իսկ սա՝ Արդուլ Համիդ ի. Զաֆարից և սա՝ յուր հորից, թե Հարիր ի. Մասլամա պաշարեց Դվին և մնաց այստեղ, մինչև պատահեցավ նորան Մավրիան հույնը. նա հարձակեցավ նորա վերա գիշերը, սպանեց նորան և ավարի առավ նորա բանակը։ Դորանից հետո Մալման շտատեց Հարիրի մոտ և պատահեցավ նորան Կարինում, ինչպես ճիշտ տեղեկություն ունեն պատմողները»։

Տես նաև եջ 43<sup>2</sup>

«Այնտեղից [Արճեշից և Բաջունայիսից] Հարիր յեկավ Արտաշատ, վոր եւ ալ-Քիրմիզ, անցավ Ակրատ գետը և բանակեցավ Դվինի դաշտում, ուղարկելով հեծելազորը քաղաքի վերա. ինքն ևս կամաց կամաց առաջ գնաց, մինչև վոր քաղաքի դռների առջև կանգ առավ։ Բնակիչք կըպաշտպանվելին, նետահարելով նորա զորքը։ Հարիր դնել տվեց մանջալիք և սկսեց քարկոծել նոցա, մինչև վոր նոքա խնդրեցին խնայել նոցա և պարզենել խաղաղություն։ Հարիր համաձայնեցավ»։

Բելազորիի պատմելով՝ Հարիրի և Մալմանի այս արշավանքների ժամանակ, վոր տեղի յելին ունեցել Ոթման խալիֆի (644—656) հրամանով, արարները նվաճել են Հայաստանը, Վրաստանը և Ատրպատականը (տես «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», եջ 36 - 53). Հարիրի արշավանքը Միքայել Ասորին (Chronique, II, f. 3, եջ 440—441) դնում ե Հեջիրի 25 թվին (28 հոկտ. 645—17 հոկտ. 646): Տարարին (տես «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», եջ 89) նույն արշավանքը հիշում ե Հեջիրի 24 թվին (644/645 թ.), սակայն վկայում ե նաև վոր ըստ Վակիրիի

ավանդության Հարիբ Ի. Մասլամա Ֆիհրին նվաճել և Հայաստանը Հեղիրի 31 թվին (24 սպոտ. 65:—12 սպոտ. 652 թ.), Այս վերջին թվականն ունի նաև Յաքուբին հետևյալ հատվածում՝

5. Յաքուբի, տես Բ. Խալաթյանց, «Արարացի մատենագրեր», եջ 104՝

«31 թ. Ոսման ուղարկեց Հարիբ Ի. Մասլամա Ֆիհրիին Հայաստան և ապա Սալման Ի. Ռաբիա Բահլիին՝ նորան ողնության».

Իրն-ել-Աթիրը ևս վկայում է, վոր «31 թ. ըստ վոմանց Հայաստան նվաճեց Հարիբ Ի. Մասլամա» (տես «Արարացի մատենագրեր», եջ 129):

Ինչպես տեսնում ենք, արարական աղբյուրները Հարիբ Ի. Մասլամայի արշավանքի նկատմամբ տալիս են տարբեր թվականներ:

Ցերտորդ խումբ (խառն յեվ ժփոք).

6. «Պատմութիւն Դևոնդեալ մեծի վարդապետի հայոց», Ա. Գետերը. 1887, եջ 8—9, գլ. Բ. և Գ՝

«Ապա ի խան եւ վեցերորդ ամի նոցին [Աբու-Բայրայ, Ամրայ եւ Օթմանայ] իշխանութեանն դարձեալ լարձակէին ելանել ի վերայ աշխարհիս Հայոց զօրու ծանու... Ցերկորորդ ամի Կոստանդնու կայսեր Հոռոմոց, որ էր քոռն Հերակլի՝ ազդ եղե առ իշխանն Թէոդորոս, եթէ հէն զարթուցեալ զայ ի վերայ աշխարհիս. Իսկ նորա առեալ զզօրս իւր՝ կամէր ունել զկիրճս ճանապարհին Զորայոյ, այլ ոչ կարաց ժամանել յաղագս նոցա. Քանզի ըստ օղաթեն արագութեան լարձակեալք իրեւ օձք թևաւորք յառաջեցին թշնամիքն, և զկնի իւրեանց թողեալ զզօրսն Հայոց՝ դէմ եղեալ ընթացան ի մալրաքաղաքն Դուին. Եւ վասն զի թափուր գտին զքաղաքն լարանց պատերազմողաց, զի ամենեքեան զհետ Թէոդորոսի իշխանին զնացեալ էին, բայց միայն».

զկանալս և զմանկտիս և զայլ խառնիճաղանձս, որք ոչ էին արք պատերազմի՝ հասին ի վերայ քաղաքին և վաղվաղակի առին դամբոցն, և զգտեալ արսն ի նմա կոտորեցին, և զկանալս և զմանկտիս վարեցին ի գերութիւն՝ ոգիս Լե՛ն»:

7. «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական», Ա. Պետերը. 1885, եջ 98, Ա, գլ. Բ<sup>1</sup>

«Ի ՂԵ<sup>2</sup> ամի քուականութեան գարձեալ սաստիկ զօրու եկեալ Տաճկաց՝ առին զ՚իուին քաղաք, և եղե համար գերութեան Լե՛ն և ապա տիրեցին Հայոց, Վլաց և Աղուանից»:

Նույնը, եջ 120, Ա, գլ. Բ<sup>3</sup>

«Ապա ի ԻԶ ամի նոցին [Աբուբաքրայ, Ամրայ և Օթմանայ] իշխանութեան և յերկրորդն<sup>2</sup> կոստանդնի թոռին Հերակլէսի՝ ել զօրն Իսմայիլի յԱսորեստանէ ընդ ճանապարհ Զորոյ յերկիրն Տարօնոյ. ընդ Բզնունիս, ընդ Բերկրոյ ձորն յԱյրարատ թափեցան: Եւ առին զ՚իուին քաղաք և զգտեալ արսն ի նմա կոտորեցին, և զկանալս և զմանկունս ի գերութիւն վարեցին ոգիս Լե՛ն, որ օր ի էր ՏԵՀԻ ամսոյ, ի կութս այգեստանի: Իսկ իշխանն հայոց Թէոդորոս Ռշտունեաց տէր, որ շինեաց զԱղթամարայ Կղզին՝ պատերազմեցաւ ընդ նոսա ի կոգովիտ և ոչ կարաց յաղթել: Եւ եղեւ այս յամս Եզրի կարողիկոսի»:

Նույնը, եջ 142, Ա, գլ. Զ<sup>4</sup>

«Կոստանդնին որդի Կոստանդնու, թոռն Հերակլի, ամս ԺԹ. ի սորա երկուրդ ամին առաւ Դուին ի Տաճկաց»:

<sup>1)</sup>Յեղյանցի ձեռադիբը (Բ) ունի «ի Ղ. ամի» համապատասխան «Անանուն ժամանակադրութեան» վերոհիշյալ վկայության. տես «Պատմութիւն տիեզերական», եջ 98, ծանոթ. 9:

<sup>2)</sup>Բնագրում ոյերբորդնս, վոր, հավանորեն, սխալ է: Նույն հեղինակը (եջ 142) վկայում է, վոր «ի սորա {կոստանդնի} երկրորդ ամին առաւ Դուին ի Տաճկաց»:

8. «Մովսեսի կաղանկատուացւոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս 1913, էջ 363, III, գլ. ԺԵ

«Իսկ կոստաս սորին [Կոստանդնի] որդի՝ ամսքսան և ինն. ի սորա հինգ ամին յԱրաբիա կոփւն եղե, և ի վեցին Տաճիկ եկին ի Հայս եւ առ ին զԴուին, և որք գերեցանն երեսուն և հինգ հազար թուեցան»:

Յերբորդ խորի հեղինակներից Ղեռնդը՝ Դվինի առման թվականը վորոշելիս՝ ոգտվել եւ թե առաջին խմբի «Անանուն ժամանակագրութիւն»-ից և թե յերկրորդ խմբի արաբական կամ ասորական մեղ անհայտ ինչ վոր աղբյուրից։ Ասողիկը քաղել և ժամանակագրական իր տեղեկությունները, գլխավորապես, Ղեռնդից։ Իսկ Մովսես կաղանկատվացու հաշիվը համապատասխանում է յերկրորդ խմբի ժամանակագրության։ Ուրեմն, աղբյուրների այս յերրորդ խումբը Դվինի առման թվականի մասին չի տալիս վորեե նոր տեղեկություն, այլ մեջ եւ բերում նախորդ խմբերի ժամանակագրական վկայությունները, աչքաթող անելով, վոր այդ վկայություններն իրար հետ անհաշտելի չեն և հակասական։ Վերոհիշյալ յերեք խումբ վկայությունների մեջ Դվինի առումը գրվում ե, ինչպես տեսնում ենք, հետեւալ թվականներին»

1. Յեղըի կաթողիկոսության վերջին տարում=640 թ.  
Սերեսու.

2. Հունաց կամ ասորոց 952 թ.=1 հոկտ. 640—641 թ.  
Դիոնիսիոս Տելմահարցի.

3. Հերակլ կայսեր թոռան Կոստանդնի յերկրորդ տարում=642 643 թ.՝ «Անանուն ժամանակագրութիւն», Ղեռնդ և Ասողիկ.

4. Հեծիրի 24 թվին=644/645 թ.՝ Տարարի.

5. Հեծիրի 25 թվին=645 646 թ.՝ Բելազորի (<sup>o</sup>), Միքայի, Ասորի և Ելիաս Մծրն, և կամ Արու Բաքրի, Ամրի ու Ռիմանի իշխանության 26 տարում=645 646 թ.՝ Ղելոնդ, Ասողիկ, Արու, Բաքրի, Ամրի և Ռիմանի իշխանության սկիզբը Ղեռնդը յեւ թաղրում ե Հերակլ կայսեր 11-րդ

տարում (=620/621 թ.). ուրեմն՝ այս խալիքների իշխանության 26-րդ տարին ընկնում ե՝ 645/646 թ..

6. Հայոց 95 թվին=646 հունիս 18—647 հունիս 17<sup>1</sup> Ասողիկ, և կամ Հերակլ կայսեր թոռան Կոստանդնի վեցեքորդ տարում=646/647 թ.<sup>2</sup> Մովսես Կաղանկատվացի:

Այսպիսով՝ Դվինի առման թվականը վերոհիշյալ վկայությունների համաձայն ստացվում ե՝ 640, 640/641, 642, 643, 644/645, 645/646 և 646/647 թվերին:

Այս խառն ու հակասական տեղեկությունները հիմք են ծառայել, բնականաբար, անհաջտելի տարածայնությունների նաև բանասիրական և պատմական թե հայ և թե ոտար աշխատություններում:

Դվինի առումը գնում են այս աշխատություններում հետեւալ թվականներին (հիշում ենք միայն այն չերկերը, վոր ունեցել ենք ձեռքի տակ):

1. 640 թ. հունվարի 6-ին՝ Զամշան, Պատմութ., Բ, եջ 343<sup>1</sup>.

2. 640 թ. հոկտեմբերի 6-ին՝ Ալիշան, Այրարատ, եջ 407 և 495, նաև Հ. Համբարյան, Հուշարձան, 1911, եջ 244.

3. 642 թ. հունվարի 6-ին՝ Tournebize, Histoire, եջ 96 և Morgan, Histoire du peuple arménien, եջ 116.

<sup>1)</sup> Մ. Որմանյանը («Ազգապատում», կոստանդնուպոլիս 1912—1913, եջ 704—705), հիմնվելով Սեբեոսի և Սամուել Անեցու վկայությունների վրա, յենթադրում է, վոր ռարաբական բանակը Դուինի առջև կըհասնի և Խոսրովակերտի անտառին մօտ բանակ կըզարնէ տրէ ամսոյ 20-ին, 640 հոկտեմբերի 6-ին շարժական տոմարով, որ ճիշտ ալ կըպատասխանէ պատմութեան յիշած յաւուր սւրբարի և ի կարս այգեստանին պարագաներուն Երեք ամրս կըտենէ Դուինը պաշարումը, և վերջապես 641 յունուար 6-ին՝ յաւուր սրբոյ Յայտնութեան (Սամ. 80), Արաբացիք քաղաքը կըգրաւեն, և անխնայ կըկոտորեն 12.000 հոգի, 35.000 հողի ալ գերի կըտանին վաճառելու, և եկեղեցի ու ապարանք կապուտ կողովուտ ընելով կըմեկնինց Նոր այս յենթադրությամբ Որմանյանը փորձում է հաջտեցնել Սեբեոսի և Սամուել Անեցու հակասական վկայությունները: Սակայն բռնպրոսիկ այս կոտահումը, անջուշա, սխալ է, վորովհետեւ Սեբեոսի մօտ պարզ ասված է, վոր արաբացիները «յաւուրն հինդերորդի դիմեցին ի վերայ քաղաքին» և «մատնեցաւ քաղաքն ի ձեռն նոցաւ»:

4. 642 թ. հոկտեմբերի 6-ին՝ Dulaquier, Recherches, էջ 227—231, Thopdschian, Zeitschrift für armenische Philologie, II, erstes Heft, էջ 64 և A. Мюлнер, История ислама, прв. Медникова, I, էջ 290.

5 645-646 թ. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris, 1919, էջ 90. նույնը — 646 թ.՝ էջ 180. նույնը — 642 թ., էջ 371.

6. 647 թ. հոկտեմբերի 6-ին՝ Ю. Кулаковский, История Византии, III, Киев 1915, էջ 202:

Ժամանակագրական այս հակասությունները վերացնելու համար անհրաժեշտ եր, անշուշտ, պարզել աղբյուրների համեմատական արժեքը և վորոշել, թե վհրը վերոհիշյալ վկայություններից կարող ե համարվել վավերական ու ընդունելիու կարևոր այս խնդիրը քննության և առնված յերկրորդ խմբի աղբյուրների նկատմամբ Մկր. Ղազարյանի «Armenien unter der arabischen Herrschaft» ուսումնասիրության մեջ։ Սակայն Ղազարյանի հիմնավոր ու համոզիչ դիտողություններն անուշադիր են թողնված դիտական հետագա աշխատություններում։

Ինչպես շատ ճիշտ դիտել ե Ղազարյանը, Բելազորին վոր առաջին անգամ զրի յե տեղի Հայաստանի նվաճման վերոհիշյալ պատմությունը, ապրել ե իններորդ դարում (†892) և նրա տեղեկությունները հիմնված են բանավոր ավանդությունների վրա, մինչդեռ Սերեսոն ականատես ե յեղել յոթերորդ դարի անցքերին։ Յերկրորդ՝ այն անցքերը, վոր ըստ արարական աղբյուրների տեղի յեն ունեցել Հարիրի արշավանքի ժամանակ Հեջիքի 24-25 թվին, ինչպես՝ Կարին քաղաքի տոռմը, Դվինի հանձնատուր լինելն առանց դիմադրության, Հաբիրի և Մավրիանոս զորավարի կռիվը և Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի նվաճումը՝ հիշում ե նաև Սերեսը, բայց վոչ 644—647 թվականներին, այլ յոթերորդ դարի հիսունական թվերին։ Մկր. Ղազարյանի այս դիտողություններին կարելի յե ավելացնել և այն, վոր հենց արարական աղբյուրների մեջ՝ Տաքարիի, Յաքուբիի

և Իբն-Ել-Աթիրի յերկերում՝ առաջ ե ըերված, ինչպես վերև տեսանք, նաև մի յերկրորդ ավանդություն ըստ Վակիդիի, վորը Հարիրի և Սալմանի վերոհիշյալ արշավանքները դնում ե յոթերորդ դարի հիսունական թվերին, այն ե՝ Հեջիրի 31 թվականին (=24 ոգոստ. 651 – 12 ոգոստ. 652 թ), Արաբական այս յերկրորդ ավանդությունը համապատասխանում է մոտավորապես վհչ միայն Սեբեոսի ժամանակագրությանը, այլ և բյուզանդական պատմիչ Թեոփիանի վկայությանը, վորն իր «Ժամանակագրության» մեջ Հարիրի արշավանքը Հայաստան և նրա կոիվը Մավրիանոս զորավարի դեմ դնում ե նույնպես Կոստանդին կայսեր 12-րդ տարում, այսինքն՝ 652/653 թ. (տես Chronographia, ed. de Boor, Lips. 1883, էջ 345):

Կարենը այս դիտողությունները, վոր աչքաթող են արված, իրավունք են տալիս յեղբակացնելու, վոր Հարիրի արշավանքի արարական այն թվականները վորոնք մեջ են ըերված Բելազորիի, Տարարիի, Միքայել Ասորու, Ելիաս Մծբնեցու, Ղեոնդի, Ասողիկի և Մովսես Կաղանկատվացու յերկերում՝ ավելի քան կասկածելի յեն և չեն կարող հավանական համարվել ու ընդունելի: Արաբական այդ վկայությունները վերաբերվում են վհչ թե Դվինի առաջին առմանը, վոր հիշատակված ե առաջին խմբի հնագույն աղբյուրներում, այլ Դվինի առմանը և Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի նվաճմանը յոթերորդ դարի հիսունական թվականների սկզբներին: Այսպիսով՝ ինքն ըստ ինքյան հասկանալի յեն դառնում և այն անհաշտելի տարածալայնությունները, վոր կան Սեբեոսի և Բելազորու վկայություններում Դվինի առման մասին: Համաձայն Սեբեոսի՝ «Դիմեալ ի ներքս զաւրք թշնամեացն՝ սատակեցին սրով զբազմութիւն քաղաքին՝ ելին և բանակեցան ի նմին բանակետեղն... և խաղաղացուցին զբազմութիւն գերւոյն՝ և հաղար», իսկ ըստ Բելազորու՝ «[ընակիչք] խնդրեցին խնայել նոցա և պարզեել խաղաղութիւն. Հարիր համաձայնեցաւ»:

Ինչպես տեսնում ենք, ավելի քան պարզ ե, վոր Բե-

լազորու վկայությունը չի վերաբերվում Դվինի առաջին-առմանը, վոր մանրամասն նկարագրված ե Սեբեոսի պատ-մության մեջ։ Միանգամայն պարզ ե նմանապես, վոր Դվի-նի առաջին առման թվականը վորոշելիս՝ կարող ենք անտես առնել թե յերկրորդ խմբի արարական և ասորական աղ-բյուրները և թե յերրորդ խմբի հայկական աղբյուրները։

Իբրև միակ վստահելի աղբյուր մնում են, հետեապես, առաջին խմբի վերոհիշյալ վկայությունները, վորոնք Դվինի առաջին առման մասին տալիս են հետեւյալ թվականները։

1. Յեղբի կաթողիկոսության վերջին տարին՝ Սեբեոս։
2. Հունաց կամ ասորոց 952 թ. (=640/641)՝ Դիոնի-սիոս Տելմահարցի։

3. Դոստաս-Կոստանդինի յերկրորդ տարին (=642/643 թ.) և կամ «ի Դ թուականին» (=641/642 թ.)՝ «Անանուն ժա-մանակագրութիւն» (նաև Դեռնդ և Ասողիկ)։

Հայկական և ասորական այս վկայությունների համա-ձայն՝ Դվինի առաջին առումը, ինչպես անսնում ենք, ընկ-նում ե 640—643 թվականների շրջանում, և ուրեմն՝ Դվինի առման տարեթիվը մնում է դարձյալ անորոշ։

Չնայած սակայն նաև այս վերջին աղբյուրների տա-րածայնություններին՝ մի խիստ կարեոր հանգամանք, վոր-մատնանիշ են արել Ալիշանը (Ալբարատ, եջ 407 և 495) և Համբարյանը (Հուշարձան, եջ 244), կովան և ծառայում ճշտիվ վորոշելու Դվինի առման թվականը տոմարական-պարզ ու անվիճելի հաշիվների ողնությամբ։

Սեբեոսի վերև մեջ բերված վկայության մեջ մատնա-նշված ե, ինչպես տեսանք, Դվինի առման ամսաթիվը և որը՝ «որ աւր ի էր ՏԵՇ ամսոյն, յաւուր ուրբարի»։

Արդ՝ հայկական տոմարը լինելով շարժական՝ 640—643 քառամյակին նավասարդի 1-ը դալիս ե, ինչպես հայտնի յե Դյուլորյելի ժամանակագրական հաշիվներից, հունիսի 19-ին (տես Dulaurier, Recherches, եջ 385). սրա համեմատ-ել նույն տարիներում տրե ամսի քսանը (նավասարդի 1-ից մինչև տրե ամսի 20-ը լինում ե 110 որ) համապատասխա-

Նում և հոկտեմբերի 6-ին, Սակայն 640—643 թվերին այս վերջին ամսաթիվը ընկնում է զանազան որեր՝

1. 640 թվին—ուրբաթ (Զատիկը՝ ապրիլի 16-ին),
2. 641 թվին—շաբաթ (Զատիկը՝ ապրիլի 8 ին),
3. 642 թվին—կիրակի (Զատիկը՝ մարտի 24-ին),
4. 643 թվին—յերկուշաբթի (Զատիկը՝ ապրիլի 13-ին):

Ուրեմն՝ հիմնվելով տոմարական սլարդ ու հասկանալի այս հաշվի վրա՝ կարելի յե ապահովապես յեղբակացնել, վոր Դվինի առումը տեղի յե ունեցել վոչ թե 641, 642 կամ 643 թվականներին, այլ 640 թվի հոկտեմբերի 6-ին, ուրբաթ։

Այս ուղիղ հաշիվը թեև աքել են, ինչպես վերև տեսանք, Ալիշանը և Համբարչանը, սակայն մենք հարկ համարեցինք հանգամանորեն կանգ առնել նույն խնդրի վրա, վորովհետեւ թուցիկ ու համառոտ կերպով առաջադրված նրանց լուսաբանություններն անտես են առնվել գիտական հետակա աշխատություններում։ Մանրախուցդ այս քննությամբ ստացվում են որաբական այս արշավանքի և Դվինի տռաջին առման մասին հետեւյալ ուշադրավ հետեւթյունները։

1. Ինչպես Հովհան Մամիկոնյանի, «Պատմութիւն որ Ներսիսի» գրքածքի, նույնպես և Սերեսի վերոհիշյալ վկայությունները վերաբերքում են 640 թվի արաբական առաջին մեծ արշավանքին, վորը տեղի յեր ունեցել Ոմաքի խալիֆայության ժամանակ։

2. Արտրներն այս արշավանքի ժամանակ մտել են Հայաստան Միջազետքի կողմից, նվաճել Զորբորդ Հայքը, Տարոնը, Բղնունիքը, Աղիովիտը և արշավել, հավանորեն, հյուսիս-արևմտյան ուղղությամբ Բասեն, Վանանդ, Ջավախք և Վիրք, իսկ հյուսիս-արևելյան ուղղությամբ՝ անցել են Բերկրիի ձորով կողովիտ ու հասել մինչև Դվին, վորի առաջին առումը տեղի յե ունեցել 640 թվի հոկտեմբերի 6 ին, ուրբաթ։

3. Դվինի առման տարին, ամսաթիվը և որը ճշտիվ վորոշում են ժամանակագրական այն կարևոր տվյալների

ողնությամբ, վոր առաջ են բերված Սերեսի և Դիոնիսիոս Տելմահարցու վկայություններում.

4. Վերոհիշյալ յերկրորդ խմբի աղբյուրների վկայությունները վերաբերվում են վոչ թե Դվինի առաջին առմանը, այլ Հարիբի արշավանքին, Դվինի գրավմանը և Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի նվաճմանը յոթերորդ դարի հիսունական թվականների սկզբներին.

5. Հայաստանում պատահած անցքերը Հարիբի այս արշավանքի ժամանակ հիշատակված են հենց 652 653 թվերին Սերեսի մոտ, վորը ժամանակակից եր այդ անցքերին.

6. Աղբյուրների յերրորդ խմբի ժամանակական տեղեկությունները կարելի յե անտես առնել, վորովհետեւ այդ տեղեկությունները քաղված են առաջին և յերկրորդ խմբի աղբյուրներից:

### ՅՐԱԲԱԿԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ԱՐԾԱՎԱՆՔՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿՈՂՄԻՑ 642 643 ԹՎԻՆ.

Համաձայն Սերեսի վկայության՝ արաբական առաջին մեծ արշավանքից հետո՝ Ներսես կաթողիկոսի միջնորդությամբ և Կոստաս-Կոստանդին կայսեր հրամանով Հայաստանում զորավար ե կարգվել և ստացել պատրիկության պատիվ Թեոդորոս Ռշտունին: Սերեսի վկայությունից յերեսում ե, վոր այդ տեղի ունեցած պիտի լիներ Դվինի առաջին առումից հետո, հավանորեն, 641 թվին: Արաբական յերկրորդ արշավանքի ժամանակ՝ Հայաստանի սահմանների պաշտպանությունը հանձնարարված ե յեղել Թեոդորոս Ռշտունուն և Բյուզանդական զորավար Պռոկոպին:

Արաբական յերկրորդ արշավանքի մասին ունի ընդարձակ մի վկայություն միմիայն՝ Դեվոնդը:

1. «Պատմութիւն Դեռնդեայ մեծի վարդապետի հայոց», Ա. Պետեր. 1887, եջ 7, դէ. Բ<sup>1</sup>

«Եւ մեծ մասն զօրուն հատեալ ասպատակէին յաշխարհս Հայոց ընդ կողմն Պարսից. և առնուին ի

գերութիւն զաւանս Մարաց և զգաւառն Գողթն և զգաստակերտն Նախջաւանու. և զբազումս յարանց ընդ սուրանցուցանէին, և զայլս գերի վարեալ կանամբք և մանկտեաւ՝ անցուցանէին ընդ գետն Երասխ ընդ հունն Զուղայոյ: Եւ ընդ երկուս բաժանեալ զօրքն՝ ոմանք զգերեալսն դարձուցանէին յաշխարհն իւրեանց: Եւ զունդ մի հատեալ ասպատակէին ընդ զաւառն Արտազի վերայ զօրավարին Յունաց, որումն անուն էր Պոռկոպ, որ էր բանակեալ ի զաւառին Կոգովտի և սահմանս Բազուծորոյ և Մարզուցայից. որում իրազեկ եղեալ իշխանն Թէոդորոս, որ էր յազգին Ռշտունեաց՝ ազգէր զօրավարին Պոռկոպաչ, «Եթէ զօր հինին իսմայիլի զարթուցեալ զայ ի վերայ մեր»:

Իսկ նորա ի բազմութիւն զօրացն ապաստանեալ և ոչ յԱստուած, որ յաջողէ զպատերազմ՝ ոչ ինչ գրէր դրանս իշխանին Հայոց: Եւ նա մորմոքեալ ընդ կորուստ աշխարհիս Հայոց և ընդ ծուլութիւն զօրավարին՝ ոչ ունէր ժոշժ, այլ մտեալ երկրորդէր և երրորդէր զրանն: Եւ բարկացեալ զօրավարին ի վերայ իշխանին՝ ձգէր զվարզն որ ի ձեռին զհետ նորա: Եւ սրտմտեալ Թէոդորոս՝ ելանէր յերեսաց նորա, և նոյնժամայն հրամայէր զօրացն, որ ընդ իւրով իշխանութեամբն էին, «վառեցարուք, ասէ, և ելէք ընդդէմ իսմայելի»: Եւ նոքա հեծեալ յերիվարս իւրեանց՝ դարանամուտ եղեն ի սարակն, որում Եղբարսն կոչէին. և կալեալ զառաջս կրծիցն՝ զբազումս ի նոցանէ սատակէին. և առեալ զկապուտ անկելոցն՝ հատուածեալ ի զօրավարէն զնացին ի զաւառն Գառնի: Հրաման ետ ապա և Պոռկոպն իւրում զօրուն ելանել ի վերայ թըշնամեացն. յորոց վերայ հեղեալ զօրն Իսմայելի՝ հարկանէին զմեծ մասն Յունաց, և զայլսն փախստական արարեալ անցուցանէին ընդ բանակն իւրեանց. և ինքեանք դարձեալ ի բանակն նոցա հանգչէին: Եւ առեն լինել զթիւ զօրացն Յունաց աւելի քան զվեց

բիւր արանց, և զիսմաչելացիսն նուազ քան զբիւր միշտ արանց: Եւ ի վաղիւն ժողովեալ զկամուտ բանակին, դարձեալ ընդ կրունկն՝ գնացին յաշխարհն իւրեանց:

Եւ եղե այս ի քան եւ երկրորդ ամի Աբու-Բաբրայ յեվ Օթմանայ եւ Ամրի, իշխանացն իսմայելի»:

2. Նույն արշավանքի մասին Ասողիկի համառոտ վկայությունը («Պատմութիւն տիեզերական», 1885, Ա, գլ. Դ, եջ 120) առնված եւ Ղեռնդից:

Վերև մենք ասացինք, վոր ըստ Ղեռնդի Աբու-Բեքրի, Ամրի և Ոթմանի իշխանությունը սկսվել է Հերակլ կայանը 11-րդ տարում (=620/621 թ., Հերակլը զահ ե բարձրացել 610 թվի հոկտեմբերի 5-ին): Ղեռնդի այս վկայությունից կարելի յե ըստ իս յենթագրել, վոր նրա ժամանակագրական հաշիվը վերաբերվում ե, հավանորեն, արաբական Հեջիրին, վորի սկիզբն ընկնում ե սակայն վոչ թե 620/621, այլ 622 թվին:

Բանասերների այն կարծիքը, վոր իբր Ղեռնդի ժամանակագրական ցուցումներն անլուծելի յեն, վորովհետև նրա մոտ անորոշ ե Աբու-Բեքրի, Ամրի և Ոթմանի իշխանության սկիզբը, ինչպես տեսնում ենք, պարզ մի թյուրիմացյություն ե: Արաբական այս արշավանքի թվականը վորոշվում ե առանց դժվարության համաձայն Ղեռնդի վերոհիշյալ ցուցման և ընկնում ե Աբու-Բեքրի, Ամրի և Ոթմանի իշխանության 22-րդ տարում, այսինքն՝ 641/642 թվականին և կամ, հավանորեն, Հեջիրի 22 թվին, այսինքն՝ 642/643 թվականին:

Հակառակ Ղեռնդի այս ժամանակագրության բանասերական և պատմական նորագույն աշխատություններում նույն արշավանքի թվականի մասին հայտնված են տարբեր կարծիքներ: Ղեռնդի հրատարակության իր առաջաբանում կ. Յեղյանցն ասում ե, վոր «չէ յայտնի ստուգիւ ժամանակ այսր ասպատակի, զի ամն քսան երկրորդ իշխանութեանն Աբու-Բէքրի, Օմարայ և Օթմանայ, յորում զայն դնեն Ղեռնդ և Ասողիկ՝ չէ մեկին և իմանալի մինչև ցայսօր, զի ոչ-

գիտեմք թէ զոր ամն թուականութեանս մերոյ համարի Դեւոնդ առաջին ամ իշխանութեան նորա»։ Նույն կարծիքին ենակ Մկրտիչ Ղազարյանը (տես Armenia unter der arabischen Herrschaft, եջ 19, ծան. 1)։ Պրոֆ. Մարկվարտը Աբու-Բեքրի, Ամրի և Ոթմանի 22-րդ տարին համապատասխան են համարում 653, 654 թ. (տես Osteuropäische und ostasiatische Streifzüge, Leipzig 1903, եջ 441)։ Ալիշանը (Այրարատ, եջ 495) և Համբարյանը (Հուշարձան, եջ 244) նույն արշավանքի թվականնը չենթաղրում են 637 թվին։ Դվինի առումից չերեք տարի առաջ, իսկ Tournebize-ը (Histoire, եջ 354)՝ 644 թվին։

Ինչպես տեսնում ենք, բանասերների և պատմաբանների կարծիքները ժամանակագրական այս խնդրի նկատմամբ նույնքան խառն են և հակասական, ինչպես և Դվինի առման թվականի մասին։

Ինձ թվում եւ սակայն, վոր ուշադիր քննությամբ հնարավոր եւ ճշտիվ վորոշել նաև այս արշավանքի տարեթիվը. անհրաժեշտ ե միայն ինկատի ունենալ անուղղակի մի շարք ցուցումներ, վոր ուշադրության չեն առնվել։

Վերոհիշյալ արշավանքն Ատրպատականի, կողմից անկարելի չեն յենթաղրել 637 թվին, ինչպես այդ արել են Ալիշանը, Համբարյանը և ուրիշները, վորովհետև 637 թվին արաբները դեռ նոր ելին սկսել Պարսկաստանի նվաճումը և նրանք դեռևս չելին հասել Ատրպատականի կողմերը։ Հայտնի չեն արդեն արաբական և ուրիշ աղբյուրներից, վոր արևմտյան Պարսկաստանում վճռական կոիվը սկարսիկների դեմ տեղի յեւ ունեցել Նեհավենդում, յոթերորդ դարի քառասնական թվականների սկզբներին (տես Th. Nöldeke, Aufsätze zur persischen Geschichte, Leipzig 1887, եջ 133, նաև Horn, Geschichte Irans in islamitischer Zeit, Grundriss der iranischen Philologie, II, 5, եջ 553)։

Սերեսը, վոր ժամանակակից եր արաբական արշավանքներին, այս մեծ կոիվը «Մարաց գաւառում» դնում ե «յառաջնում ամի կոստանդիայ թաղաւորին յունաց և յա-

մի տասներորդի Յաղկերտի արքային «Պարսից» (Թիֆլիս 1913, եջ 181, գլ. 1Բ), այսինքն՝ 641/642 թ.:

Պարզ է, վոր վճռական կովից հետո միայն արաբները կարող ենին ներս խուժել Ատրպատական և այստեղից նաև Պարսկական Հայաստան: Յեզ, իրոք, արաբական մատենագիրներն՝ Տարարին և Յաքուբին, վոր այս կետում համերաշխ են միմյանց հետ, Ատրպատականի նվաճումը Մուղեչրաի. Շորայի առաջնորդությամբ դնում են Հեջիրի 21/22 թվին, այսինքն՝ 642/643 թվականներին (տես «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», եջ 82 ևն, 104):

Կարեոր այս դիտովություններից դժվար չեն հետևյնել, վոր Ղեռնդի նկարագրած Մարդուցայքի վերոհիշյալ կոտորածը չեր կարող պատահած լինել յոթերորդ դարի քառասնական թվականներից առաջ:

Ինչպես հայտնի յէ, Մարդուցայքի դեպքը թուցիկ կերպով հիշատակված են նաև Սեբեոսի մոտ: Սեբեոսի սլատմելով՝ յերբ կոստաս-կոստանդին կայսրն արշավելու յեր Հայաստան՝ հույն զորքերն ամրաստանում ենին թեոդորոս Ռշտունուն, համարելով նրան պատճառ Մարդուցայքի<sup>1</sup> կոտորածի և պահանջում ենին սլատժել հայերին:

«Եւ ամբաստանութիւն ամենայն զաւրացն Հոռոմին և տրտունջ—ասում են Սեբեոսը—զՌշտունեաց տեառնէն լինէին, և զՀայոց՝ առաջի թափաւորին իւրեանց վասն հարուածոց՝ որ եղեն ի Մարդոցէսն: Զի ասացին՝ թէ «միաբանեցան ընդ Խսմայէլացիսն. զմեղ վստահացուցին. զզաւրսն ճապաղել ետուն յասպատակ յԱտըրսլատական, և զնոսա ածին ի վերայ մեր յանկարծակի, և հարկանել ետուն զմեղ. և մեր ամենայն ինչ անդ անկաւ. բայց թող երթամք ի Հայս և մեր իրացն խնդիր առնեմք» (Թիֆլիս 1912, եջ 225, գլ. 1Ե):

Սեբեոսի այս վկայությունը, վոր ժամանակակից պատմիչ ե՝ մենք մեջ ըերինք ցույց տալու համար, վոր Ղեռնդի:

<sup>1)</sup> Սեբեոսը վոխանակ «Մարդուցայք»-ի ունի «Մարդոցեք»:

տեղեկությունը Մարդուցայքի կոտորածի մասին ստույգ եւ և պատմական:

Այդ կոտորածը, ինչպես վերև ասացինք, չեր կարող պատահած լինել յոթերորդ դարի քառասնական թվականներից առաջ: Յեզ իրավի, բացի վերոհիշյալ դիտողություններից՝ ի նպաստ մեր յեղբակացության կարելի յե մատնանշել նաև մի ուրիշ կարենոր ցուցում:

Այդ դեպքի ժամանակը վորոշելու համար ուշադրավ ե առանձնապես Դիոնիսիոս Տելմահարցու կարենոր մի վկայությունը, վոր ուշադրության չե առնվել: Տելմահարցին իր ժամանակագրության մեջ հիշում ե Պոոկոս զորավարին և Թեոդորոսին, վորոնք արշավել եյին միասին մինչև Բատնա-Սառուց: Այդ տեղեկությունն անհրաժեշտ ենք համարում ամբողջությամբ մեջ բերել:

«955 թվին (643—644) պատրիկ Վաղենտինը, Հռոմայեցոց զորավարը՝ յեկավ կովելու արարների դեմ: Ահարեկված նրանց ներկայությունից՝ նա փախավ և թողեց իր հետ յեղած բոլոր հարստությունները, վոր ընկան արարների ձեռքը:

Նույն թվին Պոոկոսը և Թեոդորոսը մի խիստ ուժեղ հարձակում գործեցին և հասան մինչև Բատնա-Սառուց: Նրանք ավելից եցին և կողոպտեցին այդ քաղաքը, վերցրին ինչ վոր ցանկանում եյին և վերադան իրանց յերկիրը» (տես Chronique, publ. et trad. par Chabot, եջ 6—7):

Տելմահարցու այս հատվածն ուշադրության տրժանից յե այն տեսակետից, վոր այստեղ ես, ինչպես և Դեռնդի վկայության մեջ, Պոոկոս զորավարը և Թեոդորոս Ռշտունին հիշատակվում են իրեն զորապետներ, վոր զործել են միասին արշավող արարների դեմ: Դժվար չե կոահել, վոր Մարդուցայքի դեպքը յեղած պիտի լինի այս արշավանքից հետո:

Դեռնդի վերոհիշյալ վկայությունից հայտնի յե, վոր Մարդուցայքի կոտորածից առաջ Թեոդորոս Ռշտունին,

թշնամանալով՝ Պռոկոպին՝ հեռացել եր Գառնի գալառը, վորը գտնվում եր Կոգովտի հարավակողմում։ Իսկ Սեբեոսը, ինչպես վերև տեսանք, հաղորդում ե, վոր հունական զորքերը գանգատվում ելին կայսեր և մեղաղը ում թեոդորոս Ռշտունուն, համարելով նրան ու հայերին պատճառ Մարդուցայքի կոտորածի։ Շատ սլարդ ե, ուրեմն, վոր բյուզանդական զորքերի կոտորածից հետո թեոդորոս Ռշտունին չեր կարող Պռոկոպի հետ միասին մասնակցած լինել վելոհիշյալ արշավանքին Բատնա-Սառուղի ուղղությամբ։

Հստ Սեբեոսի՝ 646 թվին նա իրքև ծանր հանցագործ շղթայակապ ուղարկված ե յեղել Կոստանդնուպոլիս և արդարանալուց հետո միայն՝ նորից ստացել ե զորավարության իր նախկին իշխանությունը։

Այսպիսով, Բատնայի առումը դրվելու յե, ինչպես տեսնում ենք, Մարդուցայքի կոտորածից առաջ ձշտվում ե նաև, վոր այս յերկու ժամանակամերձ գեղքերը տեղի լեն ունեցել յոթերորդ դարի քառասնական թվականների առաջին տարիներում։

Ինձ թվում ե, հիմնվելով վերև մեջ բերված ժամանակագրական տեղեկությունների և կարեռ այլ ցուցումների վրա, կարելի յե այս անցքերի ժամանակը վորոշել ավելի ճշգրիտ կերպով։

Տեղահարցու վկայությամբ՝ Պռոկոպի և թեոդորի արշավանքը Բատնա-Սառուղի և պատրիկ Վաղենտինի փախուստն Արենելքից տեղի լեն ունեցել միննույն թվին, այն ե՝ 955—643 644 թվականին։

Արդ՝ պատմական ազբյուրների տեղեկություններից հայտնի յե, վոր 641 թվի նոյեմբեր ամսին Կոստաս-Կոստանդինը գահ եր բարձրացել Վաղենտինի աջակցությամբ։ Այնուհետև՝ Վաղենտինի արշավանքն ու փախուստն Արենելքից պետք ե դնել համաձայն Սեբեոսի, վոր ժամանակակից պատմիչ ե, վոր 643/644 թվին, այլ 642, 643 թվականին։ Դարձյալ ըստ Սեբեոսի՝ Կոստասի կայսրության յերկրորդ տարում, այսինքն՝ 643 թվին, Վաղենտինը վե-

քաղաքնել եր արդեն Կոստանդնուպոլիս և «խորհէր... համբառնալ զի՞նքն ի պատիւ թագաւորութեան»։ Թեոփանը Վաղենտինի վրադարձը և սպանությունը դնում ե 644 թվին (առ. մ. 6136, տես Chronographia)։

Ժամանակագրական այս ցուցումներից կարելի յէ հետևեցնել. վոր Պառկոպի և Թեոդորոսի արշավանքն ևս Բատնա-Սառուգ սկիտք ե յենթադրել 642|643 թվականին և վոչ 643|644 թվին, ինչու հաշվում ե Տեղմահարցին։

Ի նկատի առնելով այս ցուցումները՝ կարող ենք դարձյալ հաստատապես յեղբակացնել, վոր վերոհիշյալ արարական արշավանքի և Մարդուցայքի կոտորածի նկատմամբ terminus ante quem ոռո սկիտք ե ընդունել 642|643 թվականը։

Արդ՝ Ղեռնդի մոտ արարական այս արշավանքի ժամանակը դույց ե տրված, ինչպես տեսանք, Արու-Բեքրի, Ամրի և Ոթմանի իշխանության 22-րդ տարում, հավանորեն, Հեջիրի 22 թվին, այսինքն՝ 642|643 թվականին։ Յեվ վորովհետեւ մեծ կոիվը «Մարաց դավառում» (Նեհավենդում) հիշվում և Սեբեոսի մոտ 641|642 թվին, իսկ արարական արշավանքներն Ատրապատականում և Պարսկահայաստանում, ինչպես վկայում են արարական աղբյուրները, տեղի եյին ունեցել 642|643 թվականներին, ուստի Ղեռնդի ժամանակագրական վկայությունը կարող ենք համարել հավանական և ընդունելի։

Բատ այսմ՝ Պառկոպի և Թեոդորոսի արշավանքը Բատնա-Սառուգ, ինչպես և Մարդուցայքի կոտորածը, դրվելու յեն 642|643 թվականին։

#### 4. ԱՐԾԱՓ ԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ 650 ԹՎԵՐ ՈԳՈՍՏ. 8. ԻՆ, ԿԻՐ.

Արծափ բերդի առումը, վոր տեղի յե ունեցել արարական մի նոր արշավանքի ժամանակ Ատրապատականի կողմից, յենթագրվում ե սովորաբար 643 թվի ոգոստոսի 10-ին, կիրակի։ Այս տարեթիվը և ամսաթիվը վոր հիմնված են Սե-

բեռսի վկայության և Dulaurier-ի տոմարագիտական հաշվի վրա (Recherches, եջ 231—232), համարել են ստույդ դրեթե բոլոր բանասերները և պատմագետները<sup>1</sup> (տես Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft, եջ 29. Tournébize, Histoire politique et religieuse de l'Arménie, եջ 354. Morgan, Histoire du peuple arménien, եջ 116. Marquart, Streifzüge, եջ 440. Համբարյան, Հուշարձան, եջ 245), Սակայն այդ տարեթիվը, վոր համարվել ե մինչև այժմ անվիճելի, միանգամայն անհավանական և և անընդունելի:

Վորպեսզի պարզ և հասկանալի լինեն մեր առարկությունները՝ մեջ ենք բերում նախ այն բոլոր վկայությունները, վոր վերաբերվում են արաբական այս մեծ արշավանքին:

1. «Պատմութիւն Սերէոսի եպիսկոպոսի ի Հերակլի», Թիֆլիս, 1913, եջ 188—191, գլ. 1Բ—ԼԳ:

«Եւ եղե ի գալ միւսում ամի եկն զաւըն Իսմայէլի յԱլրապատական, և բաժանեցան յերիս. Առաջ մի յԱյրարատ, և առաջ մի իսեփինական գնդին կողմանս. և առաջ մի յԱղուանս. Արդ՝ որք ի կողմանս սեփինական գնդին, արշաւեալ սփուեցան և հալիեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի, առին զաւը և զգերութիւն: Եւ եկին ժողովեցան ի յերեան՝ և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուր: Եկին ի յՈրդսպու, և ոչ նմա ինչ կարացին առներ: Դնացին անտի և բանակեցան յԱրծափս՝ հանդէալ բերդին առ ջրովս:.... Եւ եղե յամին եւկրօրդի Կոստանդնի, յամսեանն հոռի, որ աւր ի՞ն էր ամսոյն, յաւուր կիւրակէի ընդ առաւաւտս՝ ճշեցին Իսմայէլացիքն ի բերդին վերջոյ և առաջոր, և հարին զնոսա սրով սուսերի: Եւ բազումք զահավիժ լիալ սատակէին: Եւ դկանայս և զմանկունս իջուցին ի բերդէն՝ կամէին սատակել. և ոչ զոյր թիւ

<sup>1)</sup> Ալիշանն Այրարատում (եջ 509) Արծափի տուումը զնում և 643 թվի ոգոստոսի 11-ին, իսկ Բասմաջյանը (Իսկականն ողտամասությունն Հոյոց, եջ 286) 652 թվին:

գերւոյն, և անասուն պաճարացն բազում լոյժ։ Եւ եղե  
ի վաղիւ առաւաւտուն՝ եկն եհաս ի վերայ նոցա զաւ-  
րավարն Հայոց, և եհար զնոսա անհուն կոտորածով։  
Եւ էին նոքա երեք հազար ընտիր սպառազէնս յամե-  
նայն զաւրացն իսմալէլի, և ոչ ոք զերծաւ ի նոցանէ.  
բայց սակաւ ճողովրեալք հետսակք երթեալ ամրացան  
ի Շամբին։ Եւ ապրեցոյց տէր յաւուր յայնմիկ զրազ-  
մութիւն զերւոյն ի ձեռաց իսմալէլացւոցն. և զիսմալէլ  
խորտակեաց կործանմամբ մեծաւ. և մեռան Բ իշխան-  
քըն իսմայէլի՝ Աւթման և Օգոմայ. Եւ եղե յաղթու-  
թիւն մեծ զաւրավարին Հայոց, և ետ տանել զաւրա-  
վարն Հայոց զընծայս կոստանդնի ի պատերազմէն  
զընտիր ընտիր երիվարացն Ճ ձի, զոր առեալ արքա-  
յի ուրախ եղե ինքն և ամենայն պաղատն, և արձա-  
կեաց անդրէն շնորհակալութիւն մեծ»։

2. «Պատմութիւն Ղեռնդեալ մեծի վարդապետի Հայոց»,  
Մ. Պետեր. 1887, եջ 11, գլ. Գ՝

«Ապա յետ այնորիկ յերեսուն եւ վեցերորդ ամի  
իշխանութեանն նոցա [Արու-Բաքրալ և Օթմանայ և  
Ամրի] զօր ժողովեալ դարձեալ յարձակեցան ի վերայ  
աշխարհիս Հայոց. որոց էին գլխաւորք Օթման և Օգ-  
բայ. Եւ իրեն հասին ի սահմանս Հայոց՝ յերիս բա-  
ժանեալ առաջս՝ սփուցան յասպատակս իւրեանց։  
Առաջ մի հատեալ ընդ կողմն Վասպուրական աշխար-  
հին, առին զաւանս և զամրոցս որ մինչև ի Նախջա-  
ւան քսղաք. և առաջ մի ընդ կողմն Տարօնոր. Եւ միւս  
առաջն հատեալ ի Կողովիտ՝ պաշարէին զամրոցն Ար-  
ծափաց եւ այլն։ (Արծափի առման մանրամասնություն-  
ները համապատասխանում են Սեբեռուի հաղորդած տեղե-  
կություններին)։

3. «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն  
առիւզերական», Մ. Պետեր. 1885, եջ 122՝

Ասողիկի աղբյուրն և Ղեռնդը. թվական ցույց ե-

տրված դարձյալ՝ «ԵԼԶ» ամի իշխանութեան Աքու-Բագրայ,  
Օթմանայ եւ Ամրայ»:

Ինչպես վերև ասացինք, Արծափի առման թվականը  
վորոշելիս՝ Dulaurier-ն հենվել եւ Սեբեոսի վերոհիշյալ վկա-  
լության վրա՝ «յամին երկրորդի Կոստանդնի, յամսեանն հոռի,  
որ աւր իգ էր ամսոյն, յաւուր կիւրակէի»: Յենթաղրելով  
արարական այս մեծ արշավանքը և բերդի առումը «յամին  
երկրորդի Կոստանդնի», այսինքն՝ 643 թվին, նա հաշվել եւ,  
վոր այս թվականին նավասարդի 1-ը գալիս եւ հունիսի  
19-ին իսկ հոռի 23-ը (նավասարդի 1-ից մինչև հոռի 23-ը  
լինում եւ 53 որ) համապատասխանում եւ ոգոստոսի 10-ին:  
Արդ՝ 643 թվի ոգոստոսի 10-ը, ինչպես իրավամբ մատ-  
նանշել եւ Dulaurier-ն, յեղել եւ իրոք կիրակի: Dulaurier-ի  
այս պարզ ու համոզիչ դիտողություններից հետո՝ ժամա-  
նակագրական այս խնդիրը համարվել եւ բավարար կերպով  
լուծված և Արծափի առումը դրվել եւ 643 թվի ոգոստոսի  
10-ին, կիրակի:

Ուղի՞ղ եւ արդիոք այս թվականը, վոր կրկնվում եւ գրե-  
թե անընդհատ բանասիրական և պատմական ուսումնասի-  
րություններում:

Հնդունելով հանդերձ վոր Dulaurier-ի տոմարական  
հաշիվները միանգամայն հիմնավոր են և անվիճելի, ինձ  
թվում ե, կարելի յե հաստատապես պնդել, վոր նրա մատ-  
նանշած տոմարական զուգադիպությունները պատահական  
են և չեն կարող հիմք ընդունվել ժամանակագրական այս  
խնդրի լուծման:

Արծափի առման թվականը վորոշելիս՝ անհրաժեշտ ե  
նախ և առաջ նկատի ունենալ, վոր Սեբեոսի «Պատմութեան»  
մեջ պատմական անցքերը դասավորված են ժամանակագրա-  
կան կարգով և անցքերի այդ հաջորդականությունը հիմնո-  
վին խախտվում ե նրա մոտ հենց Արծափի առման վերա-  
բերյալ վերոհիշյալ վկալությամբ: Ժամանակագրական այս  
աններդաշնակությունը Սեբեոսի գրվածքում վրիպել եւ բա-  
նասերների և պատմաբանների ուշադրությունից:

Արծափի առման վերաբերյալ վկալությունից առաջ Սեբեոսի մոտ հիշված են հաջորդական կարգով պատմական նախընթաց անցքերը, վոր տեղի ելին ունեցել Կոստաս-Կոստանդինի կայսրության յերկրորդ, հինգերորդ և հետագա մի քանի տարիներում. որինակ՝ պատրիկ Վաղենտինի դաւադրությունը (643 թվին), Վարազտիրոցի աքսորից վերադառնալը (645|646 թվին), Թեոդորոս Ռշտունու դատը Կոստանդնուպոլսում և որդարացումը, Վարազտիրոցի փախուստը, Հայաստանի իշխան և կյուրապաղատ նշանակվելը և մահը, Թեոդորոս Ռշտունու արձակումը Հայաստան և նրա վերահաստատումը զորավարության նախկին իր պաշտոնում. և այս անցքերից հետո միայն հիշվում ե արարական մեծ արշավանքն Ատրապատականի կողմից և Արծափի առումը:

Հայ բանասերներից Զամչյանը, Համբարյանը և ուրիշները, ժամանակագրական այս անտեղությունը վերացնելու համար, յենթադրել են, վոր իրը Սեբեոսի մոտ հիշված նախընթաց դեպքերը տեղի յեն ունեցել Արծափի առումից առաջ՝ 642 կամ 642—644 թվականներին։ Վարազտիրոցի վերադարձն աքսորից և նրա կյուրապաղատ նշանակվելը Զամչյանը դնում է 642 թվին, իսկ Թեոդորոս Ռշտունու հաստատվելը զորավարության պաշտոնում և Արծափի առումը՝ 642 թվին («Պատմութիւն Հայոց», II, եջ 344—345)։ Համբարյանը, վոր Արծափի առումը յենթադրում է 643 թվի ոգոստոսի 10-ին, Վարազտիրոցի աքսորից ազատվելը և հարակից մյուս դեպքերը դնում է 642 թվին (Հուշարձան, եջ 245)։ Թե այս և թե նման լենթադրությունները, իհարկե, անընդունելի լեն, վորովհետեւ Սեբեոսը պարզ ու վորոշ վկալում ե, վոր Վարազտիրոցը վերադարձել եր աքսորից «յամին հինգերորդի թագաւորութեան» կոստանդնի, այսինքն՝ 645, 646 թվականին։ Համբարյանի առարկությունը, իրը այդ թվականը հայտնի սխալ ե, անշուշտ, հիմնավոր չե։ Վաղենտինի դավադրությունը, ինչպես հայտնի լե պատմական աղբյուրներից, տեղի լեր ունեցել 643 թվին. այդ դավադրությունից հետո, ինչպես վկայում ե Սեբեոսը, «արարին

զաւրավար զԹէոդորոս զոմն<sup>1)</sup>) հաւատարիմ իշխանացն Հայաստանեայց, լայնց՝ որ ի յունաց կողմանէ»։ այնուհետև՝ սրա բարեխոսությամբ ազատված ե յեղել աքսորից Վարագտիրոցը և հաստատված իր նախկին աստիճանում։ Ինչպես տեսնում ենք, Վարագտիրոցի վերադարձն աքսորից պետք ե յեղած լինել 645|646 թւին, և վհչ յերբեք 642 թվականին, ինչպես այդ յենթադրել են Զամչյանը, Համբարյանը և ուրիշները։

Ինձ թվում ե, Սեբեոսի «Պատմութեան» 18 և 19. գլուխներում անցքերի ժամանակագրական հաջորդականությունը կարելի յե վերականգնել վհչ թե վերռնիշյալ բռնազբոսիկ լուսարանությամբ, այլ Սեբեոսի բնագրի հավանական մի նոր ուղղումով, վորը կատարելապես հաստատվում ե, ինչպես կըտեսնենք, հենց նույն ինքն Սեբեոսի մի քանի կարեոր այլ վկայություններով։ Բացի այդ՝ բոլոր անտեղությունները Սեբեոսի մոտ վերանում են դարձյալ հենց այն ստույգ համարված թվականի սրբագրությամբ, վոր վերաբերվում է Արծափի առման։

Սեբեոսի պատմության բնագիրը, վոր հասել ե մեղ 16-րդ դարի միայն մի աղճատ ձեռագրում, ինչպես հայտնի յե, ունի բազմաթիվ աղավաղություններ։

Ալղպիսի մի աղավաղություն ե, իմ կարծիքով, նաև Արծափի առման վերաբերյալ «յամին երկրորդի կոստանդնի» ընթերցվածը։ Սկզբնական բնագրում յեղած պիտի լինի «յամին Ը երորդի կոստանդնի» կամ «յամին Ը երորդի կոստանդնի» և աղավաղումն առաջ ե լեկել Ը կամ Ը և Յ տառերի նմանությունից։

Թե վորն ե այս ուղղութեարից գերադասելի, այդ կարելի յե վորոշել տոմարական հաշիվերի ոգնությամբ։

**Սեբեոսի վկայությունից գիտենք, վոր Արծափի առումը**

<sup>1)</sup> Այս Թեոդորոսին սխալմամբ շփոթում են Մարկվարտը և Կուլակովսկին Թեոդորոս Թշտունու հետ. տես Marquart, Streifzüge, էջ 440 և Ю. Кулаковский, История Византии, III, էջ 191։

սեղի յեր ունեցել «յամսեանն հոռի, որ աւր ի՞ֆ էր ամսոյն, յաւուր կիւրակէի ընդ առաւաւտս»։ Արդ՝ Կոստաս-Կոստանդինը թագավորած ե 641 թվի նոյեմբերին, ուստի նրա կայսրության իններորդ տարին ընկնում ե 649 թվի նոյեմբերից մինչև 650 թվի նոյեմբերը։ Այս թվականներին նավասարդի 1-ը գալիս ե հունիսի 17-ին և վորովհետև նավասարդի 1-ից մինչև Հոռի ամսի 23-ը լինում ե 53 որ՝ ուստի Հոռի ամսի 23-ը համապատասխան կըլինի ոգոստոսի 8-ին, եւ հենց ճիշտ 650 թվին զատիկն ընկնում ե մարտի 28-ին և Հոռի 23-ը կամ ոգոստոսի 8-ը գալիս ե իրոք կիրակի որ, ինչպես և ունի Սեբեոսը։

«Յամին լի երորդի Կոստանդնի» ուղղումը չի հարմարվում, վորովհետև 649 թվին Հոռի 23-ը կամ ոգոստոսի 8-ը գալիս ե վոչ թե կիրակի, այլ շաբաթ։ Սակայն նույն այդ ուղղումը կարող եր ընդունելի համարվել, յեթե հնարավոր լիներ ապացուցանել, վոր Սեբեոսի մոտ աղճատված ե նաև ամսաթիվը՝ «որ աւր ի՞ֆ էր ամսոյն» փոխանակ որ աւր ի՞դ էր ամսոյն»։ Այդ դեպքում՝ Արծափի առումը կընկներ 649 թվի ոգոստոսի 9-ին, վորովհետև այս թվին Հոռի 24-ը կամ ոգոստոսի 9-ը գալիս ե դարձյալ կիրակի որ՝ համապատասխան Սեբեոսի վկայության։

Նախադասելի համարելով առաջին ուղղումը՝ Արծափի առման թվականը մենք յենթադրում ենք 650 թվի ոգոստոսի 8-ին, կիրակի։

Մենք ընդունում ենք իհարկե, վոր ամսաթվի և կիրակիի այս զուգաղիպումը կարող ե ալստեղ ևս պատահական լինել, ինչպես Dulaquier-ի հաշվի մեջ. համաձայն ենք նաև, վոր Արծափի առման թվականը վորոշելու համար տոմարական մեր հաշիվը ինքնին բավական չե։ Սակայն մեր առաջարկած ուղղումը հիմնված ե և ուրիշ կարեոր ցուցմունքների վրա, վոր հաստատում են դարձյալ նույն այս յենթադրությունը։

Մեջ ենք բերում մեր յենթադրությունը հաստատող նաև մի ուրիշ ապացույց։

Ղեռնդ յերեցը, ինչպես վերև տեսանք, Արծափի առումը դնում և Դվինի առումից տասը տարի հետու Դվինի առումը նա յենթաղրում և «ի քսան և վեցերորդ ամի նոցին [Արու-Բաքրալ, Ամրի և Օթմանա] իշխանութեանն»։ Ալդ մեծ արշավանքը նկարագրելուց հետո՝ նա վկայում և այնուհետև, վոր արաբները «զադարեցին յելանելոյ ի վերաչ աշխարհիս Հայոց ամս ժ», ուստի և Արծափի առումը նա յենթաղրում և «յերեսուն և վեցերորդ ամի իշխանութեանն նոցա»։ Բայ Ղեռնդի Դվինի առումն ընկնում և, ինչպես վերև հաշվեցինք, 645-646 թվին, ուրեմն՝ Արծափի առումը կընկնի նույն հաշվով 655-656 թվին։ Այս թվականները, անշուշտ, սխալ են։ Համաձայն Սեբեոսի և Տելմահարցու վկայություններին Դվինի առումը, ինչպես վերև տեսանք, ճշտիվ վորոշվում և 640 թվի հոկտեմբերի 6-ին, ուրբաթ։ Ղեռնդի սխալ ժամանակագրությունը ծագել և, ինչպես ասացինք, արաբական կամ այլ ոտար աղբյուրների ազդեցությամբ, վորոնց մեջ Դվինի առումը յենթաղրված և Հեջիրի 24 կամ 25 թվին։ Հասկանալի լե, վոր այս սխալ թվականը հիմք եր ծառայելու նաև Արծափի առման թվականի սխալ վորոշման։ Սակայն ժամանակագրական այս սխալ հաշիվները ընավ իրավունք չեն տալիս մեզ մերժելու Ղեռնդի պարզ ու կարեոր այն տեղեկությունը, վոր Արծափի առումը տեղի լե ունեցել Դվինի առումից տասը տարի հետու Այս տեղեկությունը, վոր հիմնված և, հավանորեն, կամ ավանդության կամ թերես զրավոր վորեւ աղբյուրի վրա, կատարելապես համապատասխանում և մեր յենթաղրության, և վերոհիշյալ մեր սրբագրությունը հաստատվում և այսպիսով վոչ միայն տոմարական հաշվով, այլ և պատմական այդ վկայությամբ։ Յենթաղրելով Արծափի առումը Դվինի առումից (640 թ. հոկտ. 6) տասը տարի հետո՝ Արծափի առման թվականը ստանում ենք ճիշտ և ճիշտ 650 թվին կամ «յամին թերորդի կոստանդնի»՝ համաձայն վերոհիշյալ մեր սրբագրության։

Կարելի յէ մատնանշել մեր յենթադրությունը հաստատող նաև մի յերրորդ ապացույց:

Վոր Սեբեոսի բնագրում «յամին երկրորդի Կոստանդնի» ընթերցվածն ակներև մի սխալ և և մեր ուղղումը միանգամայն հիմնավոր՝ այդ պարզ յերեսում և արաբական նույն այս արշավանքներին վերաբերվող Սեբեոսի պարզ ու վորոշ տեղեկություններից: Բանասերների ուշադրությունից վրիպել ե, վոր հենց ինքը Սեբեոսն Արծափի առումը և արաբական այս արշավանքներն Ատրպատականի կողմից լենթադրել և Դամասկոսում կնքված յերեքամյա զինադադարի դաշինքից առաջ՝ ծովային այն պատերազմների ժամանակ, վորոնք տեղի ելին ունեցել 649 և 650 թվականներին: Արծափի առումը նկարագրելուց հետո՝ Սեբեոսը շարունակում ե

Տես եջ 191, գլ. ԼԲ (Թիֆլիս 1913):

«Իսկ այն զաւրն՝ որ ի կողմանս այրարատեան, եհար սրով մինչեւ ի կողմանս Տայոց, Վրաց և Աղուանից՝ առ զաւր և զգերութիւն, և եկն էանց ի Նախճաւան առայն զաւր, որ մարտ եղեալ կռուէին ընդ բերդին Նախճաւանի: Բայց սակայն ոչ կարացին առնուլ զնա: Առին զբերդն Խրամայ, և սատակէին զնոսա սրով, և զկանայս և զմանկունս գերի վարեցին:

Իսկ որ ի կողմանս Պաղեստինացւոցն, հրամայեաց կազմել նաւատորմիղս բազում և եմուտ ի նաւ, և կալաւ գործ պատերազմի ընդ Կոնստանդնուպոլիս. և ոչ յաջողեցաւ նմա նաւամարտութիւնն. քանզի ելին ընդդեմ նորա զաւրացն բազմութիւն նաւաւք. և կործանեցին զնոսա ի խորս ծովուն, և զբազումս վաննցին հրով. և զբազումս փախստական արարեալ հալածեցին: Բայց սակայն զարհուրեցաւ արքայն Կոստանդին. լաւ համարեցաւ տալ սակ, և առնել հաշտութիւն պատգամաւորաւք. և փութացուցանէին իսմալէլացիք զյունս՝ զի կատարեսցեն զբան հաշտութեանն: Իսկ թագաւորն յունաց Կոստանդին՝ քանզի մանուկ էր, ոչ իշխեաց

կատարել առանց կամաց զաւրուն, և զրէ առ Պոռկոպ զի երթիցէ ընդ նմա Դամասկոս առ Մաւիաս իշխանն զաւրուն իսմայէլի, և կատարեցէ զպայման հաշտութեան ըստ զաւրուն կամացն։ Արդ՝ իբրև ետես Պոռկոպ զհրամանն արքունի, և լուաւ բանս ի զաւրացն, գնաց զհետ նոցա ի Դամասկոս առ Մաւիաս իշխան զաւրուն իսմայէլի. և յայտնեաց զչափ սակին և ասաց սահմանն և առ զհաշտութիւնն, և գնաց։

Խնդիրը, ուրեմն, շատ պարզ է։ Արծափի առումը դրվելու յե, ինչպես տեսնում ենք, Պոռկոպի կնքած զինադադարից առաջ, վորի տարեթիվը Թեոփանի մոտ ևս ցույց ե տրված 650 թվականին (առ. մ. 6142, տես Chronographia, ed. de Boor)։

Արծափի առման թվականի ճշտմամբ վերականգնվում ե Սեբեոսի ԼԲ և ԼԳ գլուխներուա պատմական անցքերի ժամանակագրական հաջորդականությունը։ 646 թվին Թեոդորոս Ռշտունին շղթայակապ տարվել եր Կոստանդնուպոլիս. արդարանալուց և զորավարության իր նախկին պաշտոնում վերահաստատվելուց հետո՝ նա վերադարձել եր Հայաստան, հավանորեն, 649 թվին. այնուհետև, ինչպես վկայում ե Սեբեոսը, «ի գալ միւսում ամի», այսինքն՝ 650 թվին, տեղի ելին ունեցել արարական մեծ արշավանքներն Ատրպատականի կողմից և Արծափի առումը։

Ինչպես տեսնում ենք, Արծափի առման տարեթվի մեր նոր լուսաբանությամբ վերանում են ժամանակագրական այն անտեղությունները և թյուրիմացությունները, վոր անվերջ կրկնվում են հայագիտական ուսումնասիրություններում, ինչպես և այն ոտար լերկերում, վոր վիրարերվում են բյուզանդական կալսրության և արարական խալիֆայության պատմություններին։

Արարական թե այս և թե վերոհիշյալ արշավանքների թվականների ճշտմամբ վհչ միայն փոխվում ե արշավանքների նախկին ժամանակագրական դասավորությունը, ալ և

խախտվում են այն ընդհանրացումները, վոր հիմնված են ժամանակագրական հին սխալների վրա:

Laurent-ի «L'Arménie entre Byzance et l'Islam» նորագույն ուսումնասիրության մեջ սրբազրվելու յեն, որինակ, հետևյալ սխալ յենթադրությունները.

1. 640 թվից մինչև 651 թիվը մատնանշված են Լոռանի մոտ վեց արշավանք՝ Բյուզանդահայաստան կամ Պարսկահայաստան (տես եջ 90 և 371), մինչդեռ այդ պնդումը հիմնապես ժխտվում է նոր այս ուսումնասիրությամբ.

2. Հստ Լոռանի՝ Հայաստանն այդ արշավանքների ժամանակ շարունակ անցել ե մերթ արաբների ձեռքը և մերթ բյուզանդացիների (տես եջ 199—200 և 371). այս յենթադրությունը ևս ճիշտ չե:

Իրապես, ինչպես վերև տեսանք, մինչև 650 թիվը տեղի յեն ունեցել միայն յերեք արշավանք՝ հետևյալ հաջորդականությամբ՝

1. 640 թվին՝ արաբական առաջին մեծ արշավանքը Միջազգետքի կողմից և Դվինի առումը (640 թվի հոկտեմբերի 6-ին, ուրբաթ).

2. 642/643 թվին՝ արաբական յերկրորդ՝ արշավանքը Ատրպատականի կողմից Պարսկա-հայաստան և Մարդուցալքի կոտորածը.

3. 650 թվին՝ արաբական յերրորդ մեծ արշավանքը դարձյալ Ատրպատականի կողմից և Արծափի առումը (650 թ., ոգոս. 8-ին, կիր.):

Այս յերեք արշավանքն ել ունեցել են ասպատակության բնույթ. արաբական զորքերը վերցրել են ավար և գերիներ ու վերադարձել։ Արաբական տիրապետությունը Հայաստանում հաստատվել ե վհչ թե այդ արշավանքների ժամանակ, այլ լոթերորդ դարի հիսունական թվականների սկզբներին։

## 5. ԹԵՌԴՈՐՈՍ ՌՇՏՈՒՆԻ ՑԵՎ ԹԵՌԴՈՐՈՍ «ԶԱՒՐԱՎԱՐ ՅՈՒՆԱՑ».

Պատմագիտական նորագույն ուսումնասիրություններում շփոթել են, ինչպես ներքեւ կը տեսնենք, Թեոդորոս Ռշտունուն մի այլ Թեոդորոսի հետ, վորը պատրիկ Վաղենտինի սպանությունից հետո (643 թ.) նշանակված ե յեղել «զաւրավար յունաց»:

Թյուրիմացությունն առաջ ե յեկել նրանից, վոր պատմագետները սխալ են հասկացել Սեբեոսի վկայությունները նրա պատմության լի գլխում:

Սեբեոսը՝ Վաղենտինի դավադրությունը և նրա գլխատումը նկարագրելուց հետո՝ տալիս ե «ոմն Թէոդորոսի» մասին հետեւյալ տեղեկությունը.

1. «Պատմութիւն ի Հերակլն», Թիֆլիս 1912, եջ 184, գլ. ԼԲ:

Եւ զկոստանդին հաստատեցին լաթոռ թագաւորութեանն. Եւ արարին զաւրավար զԹէոդորոս զոմն հաւատարիմ չիշխանացն Հայաստանեալց, լայնց՝ որ ի յունաց կողմանէ: Սա իրեւ առ զաւրավարութիւնն՝ աղաչեաց զթագաւորն և խնդրեաց պարզեա՞ առնել ողորմութիւն այնոցիկ, զորս էր աքսորեալ յԱփրիկէ: Եւ մանաւանդ վասն ասպետի՝ որդւոյ Սմբատայ Խոսրով Շում կոչեցելով: Եւ քաղցրացոյց Աստուած զսիրտ թագաւորին և հրամայեաց ածել զնոսա ի քաղաքն թագաւորական: Եւ ընկալաւ զնոսա իրեւ զսիրելիս թագաւորութեանն, և զորդի նորա առաջին սպաթար զՍմբատ ի մէջ ամենայն սպաթարացն, և կանտիտատ: Եւ անդէն կարգեաց ի, կարգն առաջի լամին հինգերորդի թագաւորութեան իւրոյ: Նոյնպէս և զՎահանն Խոռխոռունի, և զայլ ես»:

Նույն այս ժամանակ, ինչպիս հաղորդում ե Սեբեոսը, Կոստանդինն ուղարկում ե Հայաստան Թումա իշխանին, վորը հանկարծակի հարձակում ե Կոտայքում Թեոդորոս

Թշտունու վրա, կալանավորում նրան և ուղարկում Կոստանդնուպոլիս։ Ինչպես տեսնում ենք, Սեբեոսի վկայություններից պարզ հետեւում ե, վոր Թեոդորոս Թշտունին և հունաց զորավար Թեոդորոսը տարբեր անձնավորություններ են։

Սեբեոսի մոտ հունաց զորավար Թեոդորոսը հիշվում է նաև մի ուրիշ հատվածում։

Վարագտիրոցը, վոր Փախել եր Կոստանդնուպոլսից ու ամրացել Տալքում, կլուրապաղատ ե կարգվել Հայաստանում դարձյալ այս զորավարի ու Ներսես կաթողիկոսի միջնորդությամբ։

«Յայնժամ հրաման ետ զաւրավարն յունաց Թէոդորոս—վկալում ե Սեբեոսը (եջ 187)։ Հանդերձ իշխանաւքն զաւրուն և նախարարաւքն Հալոց՝ արձակել զՆերսէս կաթողիկոս առ Ասպետ, և տանել նմա երդումն հաւատարմութեան ի խնդրել նմա զիշխանութիւն աշխարհին, և ածել նմա զկին իւր և զորդիսն»։ Թեոդորոս «յունաց զաւրավար»-ը, ինչպես յերեսում ե այս հատվածի բովանդակությունից, Վարագտիրոցի Փախուստի ժամանակ գտնվել ե Հայաստանում, մինչդեռ Թեոդորոս Թշտունին՝ համաձայն նույն այս ԼԲ գլխի շարունակության՝ ստացել եր նորից զորավարության իր նախկին իշխանությունը և արձակվել Կոստանդնուպոլսից Հայաստան վհչ թե Վարագտիրոցի Փախուստից առաջ, այլ նրա մահից հետո։

Ուրեմն՝ ավելի քան պարզ ե, վոր այս յերկրորդ վկայությունը ևս վերաբերվում է Թեոդորոս հունաց զորավարին և գոչ Թեոդորոս Թշտունուն։

Սեբեոսի պարզ ու վորոշ վկայությունները սխալ են հասկացված վհչ միայն գիտական հին յերկերում, այլ և պատմական ու բանասիրական նորագույն աշխատություններում, որինակ՝

1 Юл. Кулаковский. История Византии, том III. Киев 1915, № 191

«Вступив в сношения с императором при по-

средстве католикоса, Феодор Рыштуни ходатайствовал о смягчении участия своих соплеменников, членов армянской знати, которые томились в ссылке по делу о заговоре на жизнь Ираклия в 638 г. То были Вараз-Тироц, сын Сумбата Багратуни и Ваган Хорхоруни. С первым из них он был связан воспоминаниями юности, проведенной при дворе Хозроя. Предоставляя Феодору Рыштуни высшие полномочия в Армении, император внял его просьбе, вернул из ссылки обоих и возвратил им их придворные саны».

2. Marquart, Osteuropäische und ostasiatische Streifaifzüge, Leipzig 1903, № 440. տես նաև «Հա, Բագրատունեաց ճիւղագրութիւնը», թարգմ. Հ. Մ. Հապոզյանի, Վիեննա 1913, № 4:

«Հերակղ մահուլնէն յառաջ կ'երդուընցնէ իր որդին՝ որ ետ կանչէ Ասպետը եւ իւր նախկին աստիճանին մէջ հաստատէ, Սեբ. 108 (641-ին), Կոստանդին Հերակղի եղբօրորդին՝ Թէոդորոս Ռշտունւոյ աղաչանաց վրայ կըկատարէ զայս, Սեբ. 114»:

Փաստական նույն այս սխալը հանդիպում ե նաև ուրիշ աշխատություններում, վոր անհրաժեշտ ե իհարկե ուղղել:

Տուրներիզը (Histoire, № 355) և Մկր. Ղազարյանը (Armenien unter der arabischen Herrschaft, № 29) լենթաղրում են, վոր վերոհիշյալ հունաց զորավար Թեոդորոսը Թեոդորոս Վահեունին ե և վոչ Թեոդորոս Ռշտունին. Սակայն Համբարյանը Հուշարձանում լույս տեսած իր հոդվածում (№ 245) իրավամբ առարկում ե, վոր «Սեբէոս երկիցս կըյիշէ զԹէոդորոս Վահեունի, զոր նոյն իսկ ապստամբ կըներկալացնէ, մինչ հոս յիշուած Թէոդորոսը հաւատարիմ կըկոչէ կայսեր»:

Ուշագրավ ե նաև այն, վոր ինքը Սեբէոսը տարբերում ե այս յերկու Թեոդորոսներին՝ մեկին նա անվանում ե Թեոդորոս Վահեունի, իսկ մյուսին՝ «Թէոդորոս ոմն հաւատարիմ յիշխանացն Հայաստանիաց, յայնց՝ որ ի յունաց կողմանէ»:

Կարող ենք ուրեմն վստահորեն լեզրականցել, վոր Սեբե-  
սի հիշած Թեոդորոսները՝ Թեոդորոս Ռշտունին, հունաց  
զորավար Թեոդորոսը և Թեոդորոս Վահեունին՝ տարբեր  
անձնավորություններ են:

## 6. ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ ԴՐՈՒՆԴԱՐ ՅԵՎ ՎՈԶ ԿՅՈՒՐԱՊԱՂԱՏ.

Պատմական և բանասիրական գրեթե բոլոր աշխատու-  
թյուններում Վարագտիրոցի վորդին Սմբատը հիշատակված  
է իրեւ կլուրապաղատ և իշխան հայոց: Ընդհանուր այս  
կարծիքը, վոր հիմնված է Սեբեսի, Ղեռնդի և Հովհաննես  
կաթուղիկոսի ցուցմունքների վրա, ավելի քան վիճելի է:

Մեջ բերենք նաև Սմբատի իշխան կարգվելու մասին  
աղբյուրների վկայությունները.

1. «Պատմութիւն Սեբէոսի ի Հերակլն», Թիֆլիս 1912,  
եջ 188, գլ. ՀԲ:

«Արդ՝ մինչդեռ գայը հրովարտակն և պատիւն  
առնել զնա [դՎարագտիրոց] կիւրապաղատ, լանկար-  
ծակի եհաս նմա հիւանդութիւն և մեռաւ. Եւ բարձին  
զմարմին նորա և տարան թաղեցին առ հաւըն իւրում  
ի Դարիւնս: Եւ զորդի նորա զանդրանիկ. որում անունն  
էր Սմբատ, կարգեաց արքայ ի պատիւ հաւը իւրոյ,  
տուեալ նմա զիշխանութիւնն ընիկ տանուտէրութեանն  
ասպետութեան, և արար զնա դրունգար զաւրաց իւրոց:  
Ետ նմա կին ի տանէն Արշակունեաց և լիւրոց մեր-  
ձաւորաց, և արձակեաց ի բանակն առ զաւրս իւրա:

2. «Պատմութիւն Ղեռնդեալ մեծի վարդապետի Հայոց»,  
Ա. Գետերը. 1887, եջ 12, գլ. Դ:

«Ի սորա [Մուաւիայի] լառաջնում ամի իշխա-  
նութեանն և ի իԵ ամի Կոստանդնի կայսեր, որ էր  
թոռն Հերակլի, սկսաւ զօրս գուրմարել ի վերայ աշ-  
խարհիս Հայոց իշխանն Տաճկաց: Ազդ եղկ առ թագա-  
ւորն Կոստանդնին բանն. և հրամայէր զօրավարին որ

ի կողմանս Կիլիկեցւոց՝ ելանել ընդդէմ նոցաւ Հնկենոյր և զիշխանն Թէոդորոս լիշխանութինէն վասն նինգութեանն, զոր արար առ Պոոկոպայ, և փոխանակ նորա կացուցանէր զՍմբատ ոմն ի տոհմէ Բագրատունեաց, և առաքէր ընդ զօրավարին իւրում»:

3. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ, Պատմութիւն Հալոց», Թիֆլիս 1912, եջ 85<sup>1</sup>

«Իսկ նա [Վարազտիրոց] յառնուլ զիշխանութեան պատիւն՝ վաղվաղակի վախճանի. զոր և տարեալ եղին ի Դարօն առ հօր իւրում քաջին Սմբատայ. Ապա Ներսէս զորդի նորա զՍմբատ ի պատիւ հօրն խնդրէ կացուցանել, և հայցէ ևս զԹէոդորոս Ռշտունեաց տէր ի զօրավարութիւն հաստատել. Եւ այսպէս պայազատեալ՝ ապահովանայր առ ժամանակ մի ի չար հինից Հագործու աշխարհս մեր»:

Աղբյուրների այս վկայությունները բավական անկապ են և հակասական. Պատմաբանները և բանասերները, անուշադիր թողնելով ակներև ալդ հակասությունները, ոգտվել են անխտիր բոլոր աղբյուրներից առանց ալդ վկայությունների համեմատական և քննական ստուգման. Հենվելով մեջ ըերգած վկայությունների վրա՝ նրանք ընդունել են, վոր Սմբատը կարգված ե յեղել կյուրապաղատ և հայոց իշխանիր հոր մահից հետո (տես Զամչյան, Պատմութիւն Հալոց, Բ, եջ 345, 347, 349 և 356. Saint-Martin, Mémoires I, եջ 337, Tournebize, Histoire, եջ 96—97. K. Arslan, Etudes historiques, եջ 276. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft, եջ 30. Morgan, Histoire, եջ 116. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, եջ 85, 333):

Զամչյանը, Սեն-Մարտենը և Տուրնեբիզը վորոշել են անգամ նրա պաշտոնավարության տարեթիվը՝ 644—654 թ.:

Համապատասխանում են արդյոք այս յեղբակացություններն աղբյուրների հաղորդած տեղեկություններին:

Ինձ թվում ե, դժվար չե համոզվել՝ վոր ալդ յեղբակացությունները վոչ միայն հիմնավորված չեն, այլ և բո-

լորովին հակառակ են ժամանակակից պատմագրի Սեբեոսի վկայության:

Քննենք մի առ մի աղբյուրների վերոհիշյալ վկայությունները:

Դևոնդի պատմելով՝ Կոստաս-Կոստանդինը Սմբատին իշխան եր կարգել փոխանակ Թեոդորոս Ռշտունու Մարդուցայքի դեպքից հետո։ Այդ դիտողությունը ճիշտ չե։ Սեբեոսի պատմությունից մենք գիտենք, վոր Թեոդորոս Ռշտունին Մարդուցայքի դեպքից մի քանի տարի հետո (646 թվին) դատի լեռարվել Կոստանդնուպոլսում, արդար և ճանաչվել և վերահաստատվել զորավարության իր նախկին պաշտոնում ու վերադարձել Հայաստան, հավանորեն, 649 թվին։ Ժամանակակից նույն պատմիչի վկայություններից հայտնի լե, վոր Թեոդորոս Ռշտունուց հետո Կոստանդինը նշանակել եր «իշխան հայոց հեծելոց» (եջ 228, գլ. 1Ե) Մուշեղ Մամիկոնյանին և այնուհետև կյուրապաղատ եր կարգել Համազասպ Մամիկոնյանին (եջ 246, գլ 1Ը), Դեվոնդի վկայությունը, ինչպես տեսնում ենք, կարելի լե անտես առնել իրքն անհավանական և անվավեր։

Հովհաննես կաթողիկոսի ամբողջ հատվածը համառոտություն ե, անտարակույս, Սեբեոսի ընդարձակ վկայության։ Այդ հատվածի վրա ես հարկ չկա կանգ առնել։

Մնում ե, ուրեմն, Սեբեոսի վկայությունը, վորը ժամանակակից լինելով Սմբատին՝ միակ արժանահավատ աղբյուրն ե և ամենից ավելի մանրամասն ու ճշմարտապատում տեղեկություններ ե հաղորդում նրա մասին։ Եւ հենց Սեբեոսի վկայությունը, ինչպես և Հովհաննես կաթողիկոսի անհաջող համառությունը, վոր ուշադրությամբ չեն կարդացվել և բաղդատվել իրար հետ, հիմք են ծառայել վերոհիշյալ թյուրիմացության, վոր իրք Սմբատը հոր մահից հետո նշանակվել ե կյուրապաղատ և հայոց իշխան։ Սխալ են հասկացվել Սեբեոսի հատվածում Սմբատի մասին հետեւյալ տողերը։

«Եւ զորդի նորա զանդրանիկ՝ որում անուն էր

**Սմբատ,** կարգեաց արքալ ի պատիւ հաւը իւրոյ,  
տուեալ նմա զիշխանութիւնն ընիկ տանուտէրութեանն  
ասպետութեան»:

Հատվածի յերկրորդ մասից պարզ յերեւմ ե, վոր «պա-  
տիւն» այստեղ վհչ թե Սմբատի հոր կյուրապաղատության  
«պատիւն» ե, այլ «բնիկ տանուտէրութեանն ասպետութեան»:  
**Սեբեոսի** վկայության իմաստն այն ե, վոր Սմբատը լինե-  
լով Վարագտիրոցի անդրանիկ վորդին՝ ճանաչվել ե կայսեր  
կողմից իրեւ Բագրատունյաց տանուտեր: Նա չեր կարող  
կարգված լինել կյուրապաղատ և հայոց իշխան, վորովհետեւ  
**Սեբեոսն** իր վկայության շարունակության մեջ վորոշ կեր-  
պով վկայում ե, վոր Սմբատը ստացել եր կայսրից դրուն-  
գարի պաշտոն և ուղարկվել բանակ: Իսկ դրունգարությունը  
կամ գնդապետությունը, ինչպես հայտնի չե, զորական հա-  
սարակ պաշտոն եր. ուստի միանգամայն հասկանալի չե,  
վոր Հայաստանի կյուրապաղատին չեր կարելի կարգել  
դրունգար և ուղարկել բանակ:

Այսպիսով ինչպես տեսնում ենք, հերքվում ե Սմբատի  
մասին վերոհիշյալ կարծիքը, վոր մինչև այժմ կըկնվել ե  
գրեթե բոլոր յերկերում:

Я. А. Манандян

## Арабские нашествия в Армению

(Хронологические заметки)

### КРАТКОЕ СОДЕРЖАНИЕ

1. Об арабских нашествиях в Армению имеются сообщения не только в армянских, но и в арабских, сирийских и византийских источниках.

Сообщения эти отличаются, как известно, внутренней противоречивостью сообщаемых сведений, а обычно и крайней запутанностью хронологических данных.

Эти спорные сведения и неправильные хронологические даты, непроверенные научной критикой, использованы, к сожалению, в многочисленных трудах как по истории древней Армении, так и по истории Византии и арабского халифата. Вследствие этого арабские нашествия в Армению изложены в этих трудах с явными ошибками, искажающими отдельные факты и последовательность хода событий.

В настоящей статье, путем совокупного рассмотрения сведений первоисточников, установлены действительные и точные даты этих нашествий.

2. Первое вторжение арабов в Армению имело место, несомненно, с юга, почти одновременно с завоеванием ими северной Месопотамии.

Об этом нашествии дают подробные сведения Иоанн Мамиконян („История Тарона“, Венеция 1832, стр. 57—

58), „Житие Нерсеса“ (Венеция 1853, стр. 43—44), а также и арабские источники—Баладзори (изд. de Goeje, Leiden 1870 стр. 176), Табари (изд. de Goeje, Leiden 1879, 93, I, 2506) и Ибн ал-Асир. После тщательного разбора этих свидетельств, мне кажется, год этого первого вторжения арабов устанавливается с полной определенностью в 640 г. нашей эры. Не подлежит никакому сомнению, что мнения армянских и европейских ученых, предполагавших это вторжение в 636 или же в 639 г., основаны, как подробно указано в моем исследовании, на неправильной интерпретации вышеуказанных свидетельств древнеармянских историков и, несомненно, ошибочны. Что движение арабов в Армению невозможно предположить в 636 или же в 639 г., это ясно видно также из косвенных сообщений арабских, сирийских и византийских источников, в которых завоевание арабами соседней с Арменией северной Месопотамии определено указано в 639—640 г.

3. Крайней запутанностью отличаются хронологические сведения первоисточников относительно взятия арабами города Двина. В настоящем исследовании рассмотрены мною следующие свидетельства о взятии Двина армянских, арабских и сирийских источников: Себеос (Тифлис 1912, гл. 30, стр. 175), „Анонимная хроника“ (Венеция 1904, стр. 77), *Chronique de Denis de Tell Mafré* (изд. Chabot, Париж 1895, стр. 6), Баладзори (см. перевод профес. Жузе, Баку 1927 стр. 9—11), Леонтий (СИБ 1887, гл. 2 и 3, стр. 8—9), Асохик (СИБ 1885, II, гл. 2, стр. 99, гл. 4, стр. 120, гл. 6, стр. 142) и Моисей Каганкатахи (Тифлис 1913, III, гл. 15, стр. 363).

В приведенных сообщениях время взятия Двина указано в промежутке от 640 года по 647 год: у Себеоса—в 640 г., у Дионисия—в 640/641 г., в „Анонимной хронике”—в 641/642 г., у Баладзори и Леонтия—в 645/646

г., а у Асохика и Моисея Каганкатви — в 646/647 г. Ввиду этих противоречий, такое же разногласие существует и в новейших исторических трудах и исследованиях, при чем год взятия Двина полагают в этих трудах 6 января 640 г. (Чамчян), 6 октября 640 г. (Алишан, „Айрапат“, стр. 407, 495 и Амбарян, „Ушардзан“ 1911, стр. 214), в 642 г. (Басмаджян, „Подлинная история Армении“, стр. 296), 6 января 642 г. (Tournebize, *Histoire de l'Arménie*, стр. 96, Morgan. *Histoire du peuple arménien*, стр. 116, Брюсов, Летопись исторических судеб армянского народа, стр. 54), 6 октября 642 г. (Dulaurier, *Recherches sur la chronologie arménienne*, стр. 227—231, А. Мюллер, История ислама, перев. Медникова, I, стр. 290 и друг.), в 642, 645/6 и 646 г. (Laurent, *L'Arménie entre Byzance et l'Islam*, Paris 1919, стр. 90, 180 и 371) и 6 октября 647 г. (Кулаковский, История Византии, III, стр. 202).

Критическим изучением вышеозначенных свидетельств первоисточников, с полной определенностью выясняется, что точная дата указана у Себеоса современника событий 7-го века, и у Дионисия Сирийца. Согласно Себеосу город Двин был взят приступом в год смерти католикоса Езы, двадцатого числа месяца трэ в день пятницу. Пользуясь таблицами Dulaurier, Алишан и Амбарян совершенно правильно вычислили, что 20 трэ армянского подвижного календаря, приходится на пятницу 6 октября, именно, в 640 г., в год смерти католикоса Езы. Устанавливается, таким образом, не только год, но и месяц и день этой даты.

Путем тщательного исследование сообщений Баладзора и других арабских авторов, удается также установить, что взятие Аббом города Двина и завоевание им и Салманом Армении, Грузии и Азербайджана имели место не в 645/6 и не в 646/7 г., а в пятидесятых годах седь-

мого века, как об этом имеются более правильные даты у Табари (согласно Вакиди), Якубы и Ибн-ал-Асира. Неправильные даты у Леонтия, Асохика и Моисея Каганката-ваца имеют, несомненно, своим источником ту же версию арабской традиции, которая приведена у Баладзори.

В подробном сообщении Себеоса точно указан и тот путь, которым шли арабы в Айраратскую область. Выступив из северной Месопотамии, они через Битлисское ущелье и Беркри прибыли в область Коговит, т. е. в пынешний округ Баязид, а затем, двигаясь на север, вторглись в Айрарат.

Сопоставляя эти данные Себеоса с вышеуказанными сообщениями Иоанна Мамиконяна и „Жития Нерсеса“, нетрудно заключить, что сведения этих трех источников, касаются первого похода арабов в Армению, имевшего место в 640 г. Вполне ясно поэтому, что мнения ученых, предполагавших взятие города Двина во время второго или же третьего похода арабов, не могут быть признаны правильными.

4. После вышеозначенного нашествия арабов, имевшего характер грабительского набега, Византийская империя, как видно из сообщений Себеоса и Леонтия, назначила Теодора Ритуни стратилатом и поручила ему и византийскому полководцу Прокопию охрану границ Армении.

Вскоре после того имел место второй поход арабов в Армению со стороны Адербейджана. Об этом втором нашествии сохранились подробные сведения в истории Леонтия (СПБ 1887, гл. 2, стр. 7) и краткое сообщение в истории Асохика, заимствованное им у Леонтия (СПБ 1885, II, гл. 4, стр. 120).

Из рассказа Леонтия видно, что наступавшими с востока арабскими войсками были разгромлены и опустошены области Гохтан и Нахичевань, при чем частью этого

войска было нанесено в Коговите, недалеко от Мардуцай-ка, жестокое поражение греческому войску, бывшему под предводительством Прокопия. Время этих событий указано у Леонтия „в двадцать втором году Абу-Бекра, Омара и Отмана“. Эта странная дата Леонтия, вопреки мнению ученых легко об'яснима, так как первым годом этого летосчисления считает Леонтий одиннадцатый год царствования Ираклия (621/621 г.). Нетрудно поэтому догадаться, что под этим летосчислением имеется в виду арабская Геджра, начало которой приходится, однако, не в 620/621 г., а в 622 г.

Таким образом, вторжение арабов в восточные области Армении устанавливается, согласно Леонтию, в двадцать втором году мусульманской эры т. е. в 642/643 г. (22-ой год Геджры начинается 30 ноября 642 г. и кончается 18 ноября 643 г.).

Не сумев об'яснить хроноологическое свидетельство Леонтия, ученые помещали вышеуказанное вторжение арабов между 637 и 652 г.: в 637 г., т. е. за три года до взятия Двина,—Алишан, Айрагат, стр. 495 и Амбарян «Ушардзи», стр. 244, в 644 г.—Tournebize, *Histoire*, стр. 354, в 643 г.—Laurent, *L'Arménie entre Byzance et l'Islam*, стр. 90 и в 651/652 г.—Marquart, *Osteuropäische und ostasiatische Streifzüge*, стр. 441.

На основании целого ряда косвенных указаний, мне кажется, можно с уверенностью утверждать, что приведенная дата Леонтия близка к истине. Поход в Армению со стороны Адербейджана нельзя, конечно, предположить в 637 году, так как западные области Персии были завоеваны арабами после сражения при Нехавенде в 641/642 г. Но свидетельству современника этих событий Себеоса, это крупное и решающее сражение «в области Мидии» имело место «в первый год греческого царя Константина и в десятый год персидского царя Иездикерда», т. е. в

641/642 г. В полном согласии с этим свидетельством, также и арабские источники завоевание Адербайджана относят к 21/22 году Геджры (=642/643 г.).

Что приведенная дата Леонтия весьма вероятна, это видно, между прочим, из косвенного сообщения Дионисия Сирийца. Под 955 г. Селекидской эры (=643/644 г.) в хронике Дионисия отмечены следующие события: поход византийского полководца Валентина против арабов, бегство его и взятие в том же году Прокопием и Теодором Батна-Саруга (см. «*Chronique de Denys de Tell-Mahré*», изд. Chabot, стр. 6-7). Так как хронологические данные Себеоса заслуживают большего доверия, поэтому поход Валентина и его возвращение в Константинополь предположены мною не в 643/644 г., а согласно Себеосу в 642/643 г. В том же 642/643 г. можно предположить согласно Дионисию также и взятие города Батна-Саруга.

Этот южный поход Прокопия и Теодора был предпринят ими, как видно из подробного анализа свидетельств первоисточников в нашей статье, незадолго до поражения греческих войск в Коговите. А следовательно, приблизительно в том же 642/643 г. устанавливаются, на основании хронологической даты Леонтия, как сражение около Мардуцайка, так и вторжение арабов в области Гохтан и Нахичеван.

5. О третьем нашествии арабов, вторгнувшихся из Адербайджана тремя отдельными отрядами в области Айрапат, Васпуракан и в Албанию, и о взятии крепости Арцата, имеются сведения у Себеоса (Тафлис, 1913, гл. 32—33, стр. 188—191), у Леонтия (СИБ 1887, гл. 3, стр. 11) и у Асохика (СИБ 1885, стр. 122).

Армянские, как и европейские ученые, основываясь на хронологических данных Себеоса и на календарных вычислениях Dulaquier (см. *Recherches sur la chronologie arménienne*, Paris, 1859, стр. 231—232), считают дату этих

событий твердо установленной и означенное нашествие полагают в 643 году, а взятие крепости Арцана — 10 августа 643 г.

В нашей статье с несомненной очевидностью выяснено, что даты эти должны быть решительнейшим образом отвергнуты.

Ссылаясь на вычисление Dulaquier, ученые совершенно упустили из виду, что предложенной ими датой нарушается хронологическая последовательность событий, описанных в истории Себеоса. Они не обратили внимания на то, что подробному описанию нашествия арабов из Адербайджана предшествуют у Себеоса следующие факты: заговор Валентина (в 643 г.), возвращение из ссылки Варазтироца (в 645/646 г.) и его бегство в Армению, назначение Варазтироца правителем Армении и его смерть, прибытие из Константионополя в Армению оправданного и назначенного вновь стратилатом Теодора Рштуни. И лишь в следующем после того году, как определенно свидетельствует Себеос, вторгнувшимися в Армению арабами была осаждена и взята крепость Арцан.

В противоречии, однако, с приведенными косвенными данными, год взятия Арцана указан у Себеоса «во втором году Константина, в месяце Йори, двадцать третьего числа, в день воскресенье» [«յամին Երկրորդի Կոստանդնուի, յամականի Յորի, որ աւր իւ Եր ամսոյն, յաւուր Կիւրակէի»], т. е. 10 августа 643 г., как это видно из вычисления Dulaquier.

Полагая эту дату правильной, ученые (Чамчян, Амбарян и др.) исказили всю хронологию предшествующей 32-ой главы Себеоса и произвольно передвинули вышеуказанные факты (возвращение из ссылки Варазтироца и т. д.) в более ранние годы. Получилась, естественно, полная хронологическая неразбериха, ставшая обычной и в позднейших научных трудах.

Неразбериха эта, как и хронологическая несообразность в 33-ей главе Себеоса, распутаны в моей статье конъектурой даты в тексте Себеоса, сохранившемся в единственной рукописи и в сильно испорченном виде.

В подлинном тексте Себеоса вместо «յամին երկրորդի Կոստանդնի» или же «յամին ք երրորդի Կոստանդնի» (=«во втором году Константина») стояло, очевидно, «յամին ը երրորդի Կոստանդնի» или же «յամին թ երրորդի Կոստանդնի» (=«в восьмом году Константина» или же «в девятом году Константина»). Ошибка эта вполне объяснима ввиду сходства начертаний армянских букв *ր*, *ք* и *թ*. Второе чтение—«յամին թ երրորդի Կոստանդնի», т. е. «в девятом году Константина» — более правильно, так как в девятом году Константина, т. е. в 650 г. нашей эры, 28-е Йори соответствует, как вычислено мною в подробном армянском тексте настоящей статьи, 8-му августа и приходится как раз на воскресенье, соответственно свидетельству Себеоса.

Таким образом, устанавливается точная дата взятия арабами крепости Арцана—8 августа 650 г., воскресенье.

Эта новая дата с полной очевидностью подтверждается прямыми и крайне важными указаниями источников, ускользнувшими от внимания исследователей. По Леонтию, взятие арабами крепости Арцана имело место через 10 лет после взятия ими города Двина. Свидетельство это является, вероятно, обрывком устных воспоминаний. И крайне любопытно, что это ценнейшее указание Леонтия оправдывается вполне данными настоящего исследования. Как выясниено выше, город Двни был взят арабами 6 октября 640 г., а крепость Арцан—8 августа 650 г.

Исправленная мною дата Себеоса подтверждается, кроме того, и самим же Себеосом. При внимательном чтении 33-ей главы истории Себеоса, нетрудно убедиться, что и сам Себеос взятие крепости Арцана относит ко

времени морских сражений 649 и 650 г. и заключения трехлетнего перемирия в Дамаске.

Таким образом, на основании критического анализа прямых и косвенных сообщений источников, дата третьего арабского нашествия устанавливается не в 643, а в 650 г.

6. Выясненная мною хронология арабских нашествий, которой точно устанавливаются даты этих событий, в корне подрывает неправильные обобщения в исторических трудах, основанные на фактических ошибках.

В новейшей работе французского ученого Laurent-a (*«L'Arménie entre Byzance et l'Islam*, Paris 1919) имеются, например, следующие обобщения об арабских нашествиях в Армению, которые противоречат критически проверенным фактам.

До 651 г. Лоран насчитывает шесть арабских нашествий в Армению (в 640, 642, 643, 644/645, 645/646 и 651 годах) и утверждает, что во время этих нашествий Армения несколько раз была завоевана арабами и переходила несколько раз из рук арабов в руки Византии (см. стр. 90, 191, 200 и 371-372). Утверждение это, конечно, ошибочно, так как в основу его положен компилятивно собранный материал, непроверенный предварительной критикой. В действительности, как видно из настоящего исследования, до начала пятидесятых годов седьмого века было всего три нашествия – в 640 г., 642/643 г. и 650 г.

Во время этих нашествий, имевших характер грабительских набегов, почти вся Армения бессменно находилась под верховной властью Византийской империи и завоевание ее арабами состоялось не в сороковых, а в пятидесятых годах седьмого столетия.

7. В конце моей статьи рассмотрены мною два отрывка из истории Себеоса, которые неправильно поняты учеными.

В первом из этих отрывков (Тифлис 1912, стр. 184, гл. 32) свидетельствует Себеос, что Варазтироц Багратуни и Ваган Хорхоруни, томившиеся в ссылке по делу о заговоре на жизнь Ираклия, были помилованы императором Константом по ходатайству Теодора, назначенного стратилатом после заговора Валентина. Из подробного содержания всей 32-ой главы и косвенных указаний Себеоса ясно и определенно видно, что мнения Кулаковского («История Византии», т. III, стр. 191) и Маркварта (*Streifzüge*, стр. 440), отождествивших означенного Теодора с Теодором Рштуни, являются явным недоразумением, основанным на неправильном толковании соответствующего отрывка Себеоса.

Неправильно понят также и другой отрывок Себеоса, в котором имеются сообщения о том, что император Констант II после смерти Варазтироца возвел сына его Смбата в почет отца, дав ему власть коренного «танутэрства аспетства» и назначил его друнгарием своих войск (см. гл. 32, стр. 188). Это сообщение понято учеными в том смысле, будто сын Варазтироца Смбат был назначен после смерти отца куропалатом и правителем Армении. У Чамчяна, Сен-Мартена и Турнебиза указаны даже точные годы наместничества Смбата в 644/654 г. (см. Чамчян, История Армении, III, хронол., стр. 62-63, Saint-Martin, Mémoires, I, стр. 337 и Tournebize, Histoire, стр. 96). На самом же деле, как подробно выяснено в моей статье, Смбат этот, как старший в роде, унаследовал от отца власть «танутэрства аспетства», а назначен был он не куропалатом и правителем Армении, а лишь друнгарием войск Константа.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԵՎՏԻՆԻՑԻՐՅԱՆ ՔԱՐՏԵԶԻ ՀԱՐԻԶԱ ԿԱՅՈՐԱՆԸ . . . . .	3
DIE STATION HARIZA DER PEUTINGERSCHEIN TAFEL.	
ZUSAMMENFASSUNG . . . . .	13
РЕЗЮМЕ (НА РУССКОМ ЯЗЫКЕ) . . . . .	19
REKONSTRUKTION DES ITINERARS NACH *ZOLOCERTA (KARTENSKIZZE) . . . . .	21
ԱՐԱԲԻԱՆ ԱՐՃԱՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (ԺԱՄԱՆԱԿԱ- ԳՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ) . . . . .	22
1. Արաբների առաջին մուտքը Հայաստան 640 թվին . . . .	23
2. Դվինի առումը՝ 640 թ., հոկտեմբ. 6-ին, ուրբաթ . . . .	28
3. Արաբական յերկրորդ արշավանքն Ամրապատականի կող- մից՝ 642/643 թվին . . . . .	40
4. Արծափ բերդի առումը՝ 650 թվի ոգոստոսի 8-ին, կիր. .	47
5. Թեոդորոս Ռշտունին և Թեոդորոս «զաւրավար Յունաց» .	58
6. Ամբատ Բագրատունին՝ դրունդար և վոչ կյուրապաղատ .	61
ԱՐԱԲՍԿИЕ НАШЕСТВИЯ В АРМЕНИЮ. ХРОНОЛОГИ- ЧЕСКИЕ ЗАМЕТКИ (КРАТКОЕ СОДЕРЖАНИЕ) . . . .	65

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եզ	Տաղ	Տպված ե	Կարդա՛լ
8.	25	Եքսեղիցիային	Եքսեղիցիային
13	13	Zusammengefasst	зассамеугефасст
16	25	Euprat	Euphrat
18	5	sRuinen	Ruinen
18	14	ein	sein
19	27	местонахождение	местонахождение
60	11	Strreafzüge	Streifzüge
63	28	համառությունը	համառությունը

## Հ Ս Խ Հ ԼՈՒԾՈՂԿՈՄԱՏ

### ՄԵԼՔՈՆՅԱՆ ՖՈՆԴԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Պրոֆ. ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆ.—Կայուները և չափերը հնագույն հայ աղբյուրներում . . . . . 1 ռ. 50 կ.
2. Պրոֆ. Մ. ԱԲԵՂՅՅԱՆ.—Հայոց լեզվի տեսություն (սպառած) 3 ռ. —
3. Պրոֆ. ՀԲ. ԱՃԱՌՅԱՆ.—Հայերեն Արմատական Բառարան,  
Դ. հատոր. 1350 էջ.
4. ՅԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ.—Հին Յերեան (նկարագարդ) . . . . . 2 ռ. 50 կ.
5. ՅԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆ.—Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում (բազմաթիվ նկարներով) . . . . . 3 ռ. —
6. Պրոֆ. ՀԲ. ԱՃԱՌՅԱՆ.—Հայերեն Արմատական Բառարան  
1294 էջ.
7. Պրոֆ. ՀՈՎՀԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ.—Ռւղեղբություններ, Ա. հատոր,  
ԺԳ.—ԺՋ. դար. (լաթակազմ) . . . . . 10 ռ. —
8. ՅԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ.—Միքայել Նալբանդյանի Դիվան  
(լաթակազմ) . . . . . 8 ռ. —
9. Պրոֆ. ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆ.—Մանր հետազոտություններ 2 ռ. 50 կ.
10. ՍՊ. ՄԵԼՔՅՅԱՆ.—Կոմիտասի ստեղծագործության անալիզը 1 ռ. 50 կ.
11. Թ. ԹՈՐՈՄԱՆՅԱՆ.—«Շինանյութերի գործածությունն հին Հայաստանում» . . . . . 1 ռ. 50 կ.

#### ՄԱՍՈՒԵԼԻ ՏԱԿ ԵՆ

12. Պրոֆ. ՀԲ. ԱՃԱՌՅԱՆ.—Հայերեն Արմատական Բառարան. Զ. հատոր  
(1600 էջ.)
13. Պրոֆ. Մ. ԱԲԵՂՅՅԱՆ.—Հայոց լեզվի տաղաչափությունը
14. Պրոֆ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ.—Հայաստանի սեպագրական շրջանի քննական ողատմություն

**Հ. Ա. Խ. Հ. ԼՈՒԺԹՈՂԿՈՄԱՏ**

**ՄԵԼՔՈՆՅԱՆ ՖՈՆՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ՊՐՈՖ. ՀՌ. ԱՃԱՌՅԱՆ**

**ՀԱՅԵՐԵՆ**

**ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ**

**Ա. հատոր Ա.—Բ. 1232 եջ.**

**Բ. հատոր Գ.—Թ. 1350 եջ.**

**Գ. հատոր Ժ.—Լ. 1492 եջ.**

**Դ. հատոր Զ.—Ց. 1350 եջ.**

**Ե. հատոր Ն.—Ռ. 1294 եջ.**

**Զ. հատոր Ս.—Ֆ. 1600 եջ.**

Պատրաստված են հավելվածական պլաներ. (առաջաբան. համառոտագրություններ, հավելվածներ և այլն)

Վեց հատորի գինը՝ Խորհրդային Միության մեջ 180 ռուբ.

Արտասահմանում 100 դրամ.

Դիմումներն ուղղել՝

**Հ. Ա. Խ. Հ. ԼՈՒԺԹՈՂԿՈՄԱՏ, ՄԵԼՔՈՆՅԱՆ ՓՈՆԴԻ ՊՈՐՃԱԳԻՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ,**  
**ՅԵՐԵՎԱՆ, ԱԲՈՎՅԱՆ ՓՈղոց № 18, (Կույտուրայի տուն):**

Պետերասի տպայրան  
Գլավիկո 6985 (բ)  
Պատվեր № 2715  
Տիքած 1000



489758



ԳԻՒԾ 2 Ռ. 50 Կ.